

ՓՈՍՏԱՑԻՆ ԿԱՊԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ
ՅԵՎ, ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ

656

42-84

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԿԱՊԻ ԺՈՂՈՎՐԴՅԱՆ ԼԻՍԶՈՐՈՒԹՅԱՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1940

01 OCT 2010

ԲԿ

ԽՍՀՄ ԿԱՊԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

Հ | ՀՐՄ.
2-6435

656

մ-84

ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ
ՅԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ
ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ



ԻՆՎ. № 18006



ՀՐԱՄԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԿԱՊԻ ԺՈՂԿՈՄՍՏԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅԱՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1940

28 AUG 2011

**ԻՆՉՊԵՍ ԵՆ ԱՌԱՋԱՑԵԼ ՅԵՎ ԶԱՐԳԱՑԵԼ
ԿԱՊԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ**

Մեր ժամանակներում նամակը, հեռագիրը, հեռախոսային խոսակցությունը, ուղիոհաղորդումը համարվում են սովորական, առողյա յերեսույթ։ Սակայն մարդիկ միշտ չեն, վոր ունեն են կապի այդ կատարելագործված միջոցները։

Հին ժամանակներում, յերբ չեն յեղել վո՞չ հեռախոս, վո՞չ հեռագիր, վո՞չ ուղիո, վո՞չ յերկաթուղի և վո՞չ ել ավելացիա, կապ պահպաներու միակ միջոցը յեղել ե բանավոր հաղորդումը հետեւակ սուրհանդակների միջոցով։

Մարդկային հասարակության ամբողջ պատմության ընթացքում կապի միջոցները զարգանում ելին նույն արագությամբ, ինչ արագությամբ վոր զարգանում ելին մարդկային հասարակության արտադրողական ուժերը¹։ Այդ պատճառով, ուսումնակրելով կապի պատմությունը, մենք հանդիպում ենք հագարամյակներով չափովող այնպիսի ժամանակաշրջանների, վորոնց ընթացքում կապը համարյա չի զարգացել, և ընդհակառակ՝ կապի բուռն աճման ու զարգացման շրջանների։

Դասակարգային հասարակության մեջ, վորտեղ արտադրության միջոցներն ու գործիքները գտնվում են աիրող դասակարգերի՝ ստրկատերերի, Փեղալ-կարմածատերերի, կամ բուրժուագիտիների, կապի միջոցները ծառայում են վորպես աշխատավորությանը ստրկացնելու, ճնշելու և շահագործելու միջոց։

¹ «Արտադրության գործիքները, վորոնց միջոցով նյութական բարիքներ են արտադրվում, մարդիկ, վորոնք չարժման մեջ են դնում արտադրության գործիքները և իրազարձում են նյութական բարիքների արտադրությունը՝ չնորհել վորոշ արտադրական փորձի ու աշխատանքի ունակությունների, —այս բոլոր տարրերը միասին կազմում են համարակության արտադրական ուժերը»; («Համկ(ր)կ պատմություն, համառատ գասընթաց», էջ 161):



39880-67

Միայն մեզ մոտ, ԽՍՀՄ-ում, սոցիալիզմ կառուցած յերկը բում, վորսեղ վերջնականապես վերացված են շահագործող դաշտակարգերը և լիովին վոչչացված մարդու կողմից մարդու շահագործումը ծնող պատճառները, կապի միջոցները գտնվում են աշխատավորության ձեռքում, ծառայում են ամբողջ ժողովրդին, սոցիալիստական շինարարության գործին, մեր յերկը հզորության ու պաշտպանունակության բարձրացման գործին:

ԿԱՊԻ ԾԱԳՈՒՄԸ

Հաղորդումները հանձնելու կարիքն առաջին անգամ պետք է ծագեր դեռ սրանից 20—25 հազար տարի առաջ նախնադարյան-համայնական կարգերի շրջանում¹, յերբ մարդը, ոգտվելով քարե կոպիտ գործիքներից և նետ ու աղեղից, ուտելիք հավաքելուց և մանր գաղանների վորսից, անցավ խոշոր գաղանների վորսին: Նախնադարյան համայնքի անդամներին հավաքելու, վտանգի, հետապնդվող գաղանի մասին նախազգուշացնելու համար և այլն կարող եր ուղարկվել համայնքի անդամներից մեկը (հետիւն սուրհանդակ): Դա յէլ հենց կարող եր լինել նախնադարյան կապի սկիզբը²: Հետիւն սուրհանդակը և բարձրացրած ձեռքը նախնադարյան մարդու փոստն ու հեռադիրն ելին:

ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՅԵՎ ԳՐԻ ՍԿԻԶԲԼ

Կապի այլ նախնադարյան միջոցները հասարակության հետապա զարգացման հետ միասին աստիճանաբար կատարելագործվում և լրացվում են:

¹ Նախնադարյան-համայնական կարգերում մարդիկ ստիպված եյին աշխատել միասին՝ որինակ, միանարար ձուկ վորսալ, բնակարան շինել, վորս անել: Քարե գործիքները և հետո յերեան յեկած նետն ու աղեղը բացառում եյին բնության ուժերի և դիմատիչ կենդանների դեմ, միայնակ պայքարելու հնարավորությունը:

«...Ընդհանուր աշխատանքը տանում և դեսիք արտադրության միջոցների, հավասարապես և արտադրության պրոդուկտների ընդհանուր սեփականություն: Այստեղ արտադրության միջոցների մասնավոր սեփականության մասին դեռևս գաղափար չունեն, յեթե հաշվենք արտադրության միքանի գործիքների անձնական սեփականութունը, —գործիքներ, վորոնք զրա հետ մեկտեղ հանդիսանում են գիշատիչ գաղաններից պաշտպանվելու գործիքներ: Այստեղ չկա շահագործում, չկան զասակարգեր»: («Համիկ(ր)կ պատմություն, համառոտ գասլնթաց», Էջ 166—167):

² Այդ շրջանի կապի մասին կարելի յե խոսեկ միայն կենթավորությամբ, քանի վոր այդ մասին ստույդ ավանելեք չկան:

Տրանսպորտի առաջին միջոցները՝ դահուկները, սահնակները և քարշակները յերեացին հին քարե զարի վերջում, մոտավորապես 8—10 հազար տարի առաջ: Միքիչ ավելի հետո մարդուկի սովորեցին վորել մակույկներ: Փոխանակության և պատերազմական ընդհարումների շատացումից զարգացան տրանսպորտի ավելի կատարելագործված միջոցներ՝ անվագոր սայլակները, թիառադաստանավերը, վորոնք հեծելածիության ովտագործման




Հետիւն սուրհանդակ

հետ միասին զգալիորեն արագացրին հաղորդումների հանձնումը մեծ տարածության վրա:

Մենք գիտենք բանավոր հաղորդման միջոցով լուրերի արագ տարածման շատ զեպքեր, վորոնք մինչեւ մեր որինք զոյսություն ունեն Աֆրիկայի, Հարբելաստանի և Աղվանաստանի վորու ցեղերի մեջ: Մեզ մոտ Խորհրդային Միությունում զաղախների, կերպեկների, թուրքենների, կարակալպակների մոտ կապի այդ միջոցը նույնիսկ հասուկ անուն ուներ Ռուզունկուլազը, վորը նշանակում է մեծ կամ յերկար ականից:

Քաղաքացիական պատերազմի տարիներին շատ նորություններ զարմանալի



Սուրբանդակն անցնում է գետը, նրա զլխակապի մեջ նամակներ կան

արագությամբ եյին տարածվում Ղաղաքաստանի անապատներով ու Թուրք մենստանի ավագուտներով այդ «ուզունկուլաղի» միջոցով։ Պատահում եր, վոր հռուագիրը դեռ հաղորդած չեր լինում շտարին, վոր Դուտովիլը պարագել և Ակյուրեինսկի մոտ կամ Աննենկովը՝ Ամերիեէջեյում, իսկ ուզեկ կարմիր բանակայիններն արգեն տեղեկացնում եյին, վոր Դուտովիլը ու Աննենկովի սպիտակ-դվարդիական բանեանները ջախջախած են և նահանջել են անապատ-



Նամակներ «Խոսող» իրերից

Այս ժամանակէ, յերբ մարդիկ գեռ գրել չգիտելին, նամակները
կազմվում ելին այնպիսի իրերից, վորոնք միմիայն իրենց տեսքով
«խոսում են»: Յերբ հոգիկների մի ցեղը պատերազմ եր հայտա-
րաբում մյուսին, նա ուղարկում եր մի փունջ նետ, իսկ յերբ
հաշտություն կամ բարեկամություն եր առաջարկում, ապա ուղար-
կում եր ծխամորճ և մի պարկ ծխախոտ: Այսաեղից ել առաջացել
է «Հաշտության ծխամորճ» անունը:

Ների խորքը. Վերջին նորությունները հբանց հայտնած եր լինում մի վորեկն զազախ ճամբարդ:

Բերանացի հաղորդման այսպիսի արագությանն Ասիայում նպաստում էր նաև այն հանգամանքը, զոր նրան ամբողջ Հյուսիսային մասը տակաստան Ե՛ ձիւն մատչելի, իսկ այդ տակաստանի ընակինքները, Հաստրակական-կենցաղային գարբացած հարաբերություններով կապված լինելով միմյանց հետ, բնածին ձիալորներ են:


Ծառի կեղեկի, վլոնկրի, յեղջյուրի կամ փայտե տախտակի վրա նկարելու ձև, կամ փայտի վրա փորելու ձև ունեցող գրի ծագումը հնարավորություն տվեց սուրհանդակի միջոցով հայոնել վոչ միայն բանակլոր հաղորդումներ, այլև նամակ գրել: Սուրհանդակով նամակ ուղարկելու առաջին տեղեկությունները վերաբերում են բրոնզե դարին: Մինչեւ մեր թվականության XII դարին վերաբերող գրվածքներից մեկում՝ «իշխականում» նկարագրված են, թե ինչպես ցեղապետը սուրհանդակի հետ նամակ ե ուղարկում: Նամակն իրենից ներկայացնում եր իրար կպած ծալովի տախտակներ:

ՏԵՍՈՂԱԿԱՆ ՅԵՎ ՀՆՉՅՈՒՆԱՅԻՆ ԿԱՊ

Բայց յեթե ձին «Թռչում ե» հետևակից արագ, ապա լույսն ու հնչյունը «Թռչում են» ձիուց ավելի արագ։ Ահա թե ինչու նահապետական ցեղերի ու տոհմերի պատերազմական առաջին ընդհարումներն առաջ են բերել այն ժամանակ տեսողական (լույսային) և հնչյունային կապի ամենաարագ միջոցների դարպագումը։

Ուազմական արտակարգ լուրերի հաղորդման համար սկսեցին ոգտագործել վառլող խարույկների ծուխն ու կրակը: Խարույկը յերկում և համարյա 15 կիլոմետր հեռավորության վրա: Նկատելով ծուխը (ցերեկով) կամ կրակը (զիշերով), դիտողը վառում էր նախորդ պատրաստած իր խարույկը, այդ նկատում էր հարեան դիտողը, ու մի բոպեյից հետո նրա մոտ ել երբցավառվում կրակը և այլն: Որինակ, պատերազմի լուրը տարածվում էր մեծ արագությամբ:

Կապի այս ձեկի հաղորդումը գոյություն ուներ Հազարալոր տարիներ և, իմէջի այլոց, լայն գործադրություն կտավ 1916 թ. Սեմբիքչյում, կերպիգների և զազախների ժամանական ապստամբության ժամանակ ընդգեմ ցարական կառավարության։ Կիրաքիջներն ու զազախները խարույկներով հայտնում եյին միջրանց ինքնակալական զաղութարարների, սպաների և կուլակների ղեալսալած պատճեռագրմի մասին։



Լուրերի հաղորդումը ծխային ազդանշաններով

Հին ստրկատիրական¹ Հունաստանում Ա—ԱՌ դարերում (մեր թվականությունից առաջ) պատերազմների ժամանակ գործադրվում էր հին պատմաբանների նկարագրած ջահային «Հեռագիրը»: Մեկից մինչև հինգ վառված ջահերի բարձրացման միջոցով կարելի յեր հաղորդել Հունական այրուքնի յուրաքանչյուր տառը, հետեւարար և ամեն մի հաղորդման բնագիրը: Այդ ար-


¹ Ստրկատիրական կարգերում արտադրության միջոցներն ու արտադրության մեջ աշխատողները հանդիսանում են այս ստրկատիրոջ սեփականությունը: «...Սյատեղ արդեն չկա հասարակության բոլոր անդամների ընդհանուր և աղասի աշխատանք արտադրության պրոցեսում, — այստեղ տիրապետում ե չաշխատող ստրկատերերի կողմից շահագործվող ստրուկների հարկադիր աշխատանքը: Ուստի և չկա արտադրության միջոցների, ինչպես նաև արտադրության պրոդուկտների ընդհանուր սեփականությունն ևս: Նրան փոխարինում և մասնավոր սեփականությունը: Այստեղ ստրկատերն առաջին և հիմնական լիարժեք սեփականատերն է:

Հարուստներ և չպալորդներ, շահագործողներ և շահագործվողներ, լիքրակներ և իրավագործիներ, դաժան զասակարգային պայքար նրանց միջև, — այս և ստրկատիրական կարգերի պատկերը»: («Համեկ(ր)կ պատմություն, համառոտ դասընթաց», եջ 167—168):

դեն խարույկներով կատարվող նախկին ազդանշանման խոշոր կատարելագործումն եր:

Լուսավոր աղդանշաններով կատար և կելաբուլալտուերների դրդակցությունը—մինչև որս ել պահպանվել ե, վորպես կապի ոժանդակ միջոցներից մեկը ուսումական գործում:

Կապի մյուս հին ձեր, վորը հիմնված ե արդեն հնչյունային աղդանշանի վրա և առաջացել ե ուսումական առաջին ընդհա-



Զահային «հեռագիրը» Հունաստանում (Ա դար. մեր թվակ. առաջ)


րումներից—դա թմբուկն ե, մեծ թմբուկի ձայնը լսվում ե շատ հեռու, մանավանդ գիշերը: Հարավային յերկրներում—կենտրոնական Սֆրիկայի և Ալմարալիայի նեղը ժողովուրդների մոտ թմբուկներով աղդանշանը պահպանվել ե մինչև այժմ:

Անգլիական մի արշավախումբ, վորն իմպերիալիստական պատերազմի ժամանակ աշխատում եր Աֆրիկայի կենտրոնում, նեղերից իմացավ «մարդկանց լցուած մի մեծ մակույկի» խորտակման լուրը: Այդ զերմանական սուզանավի կողմից «Լուսիտանիա» շոգենավի խորտակման լուրն եր, վոր 2—3 որվանթացքում թմբուկների միջոցով հաղորդվել եր 2 հազար կիլոմետր տարածության վրա:

ԿԱՊՆ ԱԳԱՎՆԻՆԵՐԻ ՌԴՆՇԽԹՅԱՍՄԲ

Աղավնիների իրենց հարազատ բունը վերադառնալու ընդունակությունը չատ վալուց՝ եր նկատմած։ Սրանից պվելի քան 2000 տարի առաջ Հույներն աղավնիների միջոցով իրենց յերկրի բնակչությանը տեղեկացնում եյին ուսպմական խաղերի արդյունքների մասին։ Շատ հին ժամանակներում Հռոմի կրիստոնին հրապարակներում բարձրանում եյին թեավոր լրաբերները և հաղորդում կայսրության բնակչությանը, թե ով է հաղթել մրցումներին։ Յեղիպատճիք ու չինացիք շտապ հաղորդումները կատարում եյին աղավնիների միջոցով։

Աղավնիները կանոնավոր խնամվելու դեպքում կարող են թռչել մի ժամում 60—80 կիլոմետր արագությամբ։ Հայտնի յեն դեպքեր, յերբ աղավնիներին բաց են թռողել տնից 1000 կիլոմետր հեռու, և նրանք հենց նույն որը վերադարձել են տուն։ Հասուկ ողակով նրանց թաթիկին ամրացված տեղեկությունները պերճախոս կերպով վկայում են նրանց թռիչքի մասին։



Տեղեկությունների հալորդումը հնչյունի միջոցով։ Նկարում—Աֆրիկայի նեգրերի ցեղի քմբուկային «հեռագիրը»։ Այս «հեռագրով» Աֆրիկայում ոգտվում են և ներկայում։

Սրանից 70 տարի առաջ—1870 թվին պատերազմ ծագեց Պրուսիայի և Ֆրանսիայի միջև։ Փարիզը շրջապատված եր թշնամիներով և կտրված աշխարհց։ Պաշարվածները վոչ մի կազ չեյին կարողանում պահպանել իրենց յերկրի և ֆրանսական զորքերի հետ։ Այդ ժամանակ եր ահա, վոր նրանք հիշեցին աղավնիներին։ Աղավարեկի վրա բարձեցին վանդակների մեջ զրված թռչունները։ Աղավարեկը թռալ թշնամու զիրքերից և իջավ ֆրանսական զարքերի մեջ։ Աղավնիներին կառեցին զեկույցներ, և նրանց բաց թողին։ Զնայած թռչուններն ստիպված եյին վերագրանալ ուղմանակատի վրայով։

Հորտեղ հրաձգություն եր տեղի ունենում, այնուամենայնիվ չատ աղավնիներ Փարիզ հասն, և պաշտպանեցներն ստացն յերկար սպասած տեղեկությունները։ Փորձը կրկնվեց միքանի անդամ։ Աղավնիներից մեկն այլպիսով միքանի ճանապարհորդություն կատարեց ուղմանակատի վրայով։

1914—1918 թ. թ. համաշխարհային պատերազմի ժամանակ թիվունքում և ճակատում ողազործում եյին ստացիոնար և շարժական աղավնակայանները։ Կովկասական վրայով, ծխաղատնեների միջոցով թռչում եյին փոստատար աղավնիները։ Արկերը կտրառում եյին հեռազբարերը, վայր եյին զցում լրացավոր աղքանչանները։ Գնդակները հասնում եյին համբավարեներին և սուրհանդակներին, սակայն գժվարությամբ եյին վայր զցում բարձր թռչող կապավոր աղավնիներին։

Ռուսական մեծ աղավնակայանները գտնվում եյին արևմուտքում, ամրոցների մեջ։ Գլխավոր աղավնակայաններին եյին Բրեստ-Լիտովսկը և Վարչովիլ։

Աղավնային կազը տարեցտարի կտարելագործվում և և մեծ նշանակություն ձեռք բերում։

Այժմ փոստատար աղավնու թաթիկին ամրացնում են ալյումին մի պարկում, վորի մեջ զրվում և 25 մանրանկար Փոտոթերթիկ՝ նկարված հաղորդումներով։ Շնորհավայր այն հանդամանքի, վոր Փոտոնկարը վերաբարերում և տեքստը խփու փոքրացրած ձեռվ, մեկ աղավնին կարող և 35 հազար հասուք հաղորդում հասցնել։ Հնարկած և նաև մանրանկար Փոտոսպարատ, վորը բոլոր փականներով կը ունի և մոտ 40 զրամ։ Քա կազմում և թռչունի կը ունի մեկ տասերորդը։

Աղարատը գործում և ավտոմատ։ Աղավնու կրծքին ամրացված ապարատը վորոշ ժամկետների, վորոնք նկատի ունեն նրա թռիչքի արագությունը, չնկացնելով փականը, նկարում և վայրերը։

ՓՈՍՏԻ ՍԿԻԶԲԸ

Հին Արեելքի խոշոր պետություններում՝ Յեղիպտասոսում, Ասորեստանում, Պարսկաստանում և Զինաստանում, մեր թվականությունից 2—3 հազար տարի առաջ արդեն գոյություն ուներ պետական փոստ։ Պարսկական Կյուրոս թագավորի որով (մեր թվ. առաջ 71 դարում) նրա լայնածավալ միապետության ճանապարհներին հիմնվում եյին փոստային կայաններ, վորտեղ պահպատմություն եյին սուրհանդակներ և հերթափոխ ձիեր։

2400 կիլոմետր յերկարությամբ մի ճանապարհի վրա 111 կայան կար, նամակները տեղ եյին հասցվում ևստափետով՝ 5—7 որում։

Մեր թվականության առաջին դարից մինչև 5-րդ դարը Հռոմում գոյություն ուներ պետական փոստ իր փոստակայաններով, մարդիկ փոխադրող հերթափոխ ձիերով ու սայլակներով։ Կազմակերպված արևելյան միապետությունների որինակով։

Նամակները զրվում եյին պատիրուսի (սա մշակվում եր նե-

Պոսի գելտայում աճող մի բույսից) կամ յԵրկտակ ծալվող տախտակների վրա, վորոնք մոմի չերտով եյին ծածկված։ Տախտակները վավերացվում եյին ժապավեններով ու կնիքով։

Վ դարի վերջում Հռոմեական կայսրության անկումից հետո



Հին հռոմեական հեծյալ սուրհանդակ

պետական վիստը ՅԵԼԲԱՂԱՅՈՒՄ դադարում է գոյություն ունենալուց մինչև XV դարը։

Անհրաժեշտ է նշել, վոր ստրկատիրական միասկետությունների պետական վիստը՝ սպասարկում եր միայն պետական ապարատին և պետական բարձրաստիճան պաշտոնյաներին։



Նամակ արմավենու տերեկի վրա

Ամրության համար կավե շրջանակը
քրծում եյին աղյուսի պես։

ՓՈՍՏԸ ՖԵՌԴԱԼԻԶՄԻ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ¹

ՎԱՆԱԿԱՆ ՅԵՎ. ՔԱՂԱՔԱՅԻՆ ՓՈՍՏԸ

Ֆեռդալիզմի գոյության ու զարգացման զարաշրջանում (V—XV դար) Արևմտյան Յեվրոպայում գոյություն ունեցին բազմաթիվ մանր Փեռողական պետությունների: Կազմն այդ շրջանում ունի ցայտուն կերպով արտահայտված դասակարգային բնույթ: Հռոմեական կաթոլիկ յեկեղեցին կազմակերպում ե իր վանական փառը: Ասպետական կազմակերպությունները նամակներն առապեսների դղյակներն ելին հասցնում իրենց հեծյալ սուրհանդակներով:

Ֆեռդալական հասարակության ընդերքում առևտրական կապիտալի զարգացման հետ միասին՝ զարդարող առևտրի կարիքների սպասարկման համար կազմակերպում ե առևտրական ազատ քաղաքների և առևտրական ընկերությունների մասնավոր փոստ:

¹ Ֆեռդալիզմը մի հասարակակարգ և ֆեռդալ կարլածատերների ճորտառիքական իրավունքով:

Այդ ժամանակաշրջանում արտադրության միջոցները ֆեռդալի սեփականությունը կազմելու և արտադրության աշխատավորացման փորձը ֆեռդալի՝ վուշտիվ սեփականությունը կազմելու հետ միասին, փորին ֆեռդալն արդեն չի կարող սպանել, սպանյան վարին նաև կարող է վաճառել և վճել, դոյսություն ունի նաև գուղացու և արհեստավորի միանձնյա սեփականությունն արտադրության գործիքների և իր մասնավոր անտեսության վրա հիմնված անձնական աշխատանքի նկատմամբ:

«Այսուեղ մասնավոր սեփականությունը հետակա զարգացում և ստանում: Շահագործումը համարյա նույնպես զաժան և, ինչպես և սորկության սրով, — այն միայն վարքը ինչ մեղմացը լու: Շահագործողների և շահագործվողների միջև մղվող դասակարգային պայքարը կազմում ե Փեռողական կարդիքի հիմնական զիծը» («Համել(բ)կ պատմություն, համառոտ դասընթաց», Էջ 168—169):

ԿԱՊԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՈՌԻՍԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ մեջ կազմակերպված հաղորդակցության միջոցներ գոյություն չունելին:

Խ—XIII դարերում ոռւսական իշխանությունների մեջ կազմակերպված հաղորդակցության միջոցներ գոյություն չունելին: Ինչպես իշխանության ներսում, այնպես ել առանձին իշխանությունների միջև կապը պահպանվում եր սուրբհանդակությունը պահպատավոր եր իշխանական ներկայացուցչին հատկացնել փոխադրական միջոցներ:

ԹԱԹԱՐԱԿԱՆ «ՅԱՄԻ»

Թաթարները XIII դարում ոռւսական իշխանությունները հպատակեցնելով իրենց, մացըին հարկի «յամ» կոչված առանձին տեսակը, իսկ հետագայում և պարհակը: Բուս բնակչության միջոցներով ճանապարհների վրա պահպանվում ելին կայաններ, — «յամեր», վորտեղ «յամչիները» փոխում ելին ձիերը: Այսուեղից ել առաջացել ե ոռւսական «յամչչիկը»:

ՅԱՄԱԿԱՆ ՎԱՂԲԻ (ՄԻՆՉԵՎ. ՊԵՏԱԿԱՆ ՓՈՍՏԻ ՄԿԻԶԲԻ)

XV դարում ոռւսական իշխանությունները միավորող Մոսկվյան պետության ամրացման հետ միավորին առաջացավ առանձին առանձին պահպատավոր փոստ:



XIII—XIV դարերի թաթարական յամ (Ճիկրի փոխանակման կայան)


ձին կանոնավոր կապի անհրաժեշտությունը: Մոսկվայի իշխան-ները կազմակերպեցին փոստային (յամական) վաղք, վորը ծանր բեռի նման ընկնում եր գյուղացիական բնակչության վրա: Սկզբում «վաղքը» սպասարկվում եր ճանապարհին մոտ գտնվող գյուղերի բնակչության կողմից, իսկ սկսած XVII դարից գյուղացիական համայնքներում ընտրված ցանկացողներից: Յամային վաղքը սպասարկում եր միայն պետության և իր թաղավորի կարիքները: Յամային ձիերից ոգտվել և այսուել կերակը կարող եին միայն այն անձերը, վորոնք ունեյին հասուկ արտօնագիր—ուղեգիր: Մեղ հասած սուաջին ուղեգիրը վերաբերում է 1489 թվին:

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՍՏԻ ՍԿՐԶԲԸ

Արևմտյան ՅԵՎՐՈՊԱՅՈՒՄ պետական փոստն առաջին անգամ կազմակերպվում և Ֆրանսիայում 1464 թ. Լյուդովիկոս XI թագավորի որով, թաղավորական իշխանություն ունեցող միասնական ազգային պետության ստեղծման շրջանում:

XVII դարում ֆրանսիայի պետական փոստն արգեն սկսում է աշխատել վորոշակի որերի և վարձով ընդունում և մասնավոր նամակագրություն:

1505 թվից Հարսուրդների կայսրության սահմաններում Գերմանիայում, Նիդերլանդիայում, Իտալիայում—կազմակերպվում են մասնավոր ձեռնարկուական փոստ, վորն սպասարկում եր աետությանը և մասնավոր անձերին:



Փոստային խթիքի բակը XVII դարում

Գերմանիայում մասնավոր ձեռնարկուական փոստը գոյություն ունեցավ մինչև 1867 թ., յերբ նա գնվեց պրուսական կառավարության կողմից:

XVII դարում Ռուսաստանում փոստային վաղքի համար կազմակերպվում ե կենտրոնական վարչություն—յամային խրճիթը, վորը հսկում եր պետական գրադրությունների առաքմանը, ծառայող անձերի և պետական բռնիքը փոխադրելու գործին:

Յամային սպարհակն այնքան ծանր ե դառնում, վոր գյուղացիները ճանապարհին մոտ գտնվող շրջաններից ամբողջ գյուղերով փախչում են:

XVII դարում Ռուսաստանում կազմակերպվում ե առաջին փոստային վարչությունը՝ յամային ատյանը:

Յամերն ու յամչչիները (փոստատար-կառապանները) պահպատմ են պետության հաջին: Սակայն կառապանների գրությունը գրանով չի թեթևանում:


Կառապանն արյուն-քրտինքով եր ձեռք բերում մի կտոր հացը: Ճանապարհները յերբեք չելին նորոգվում: Ուժասպառ ելին լինում հալումաշ յեղած ձիերը, հյուծված խրվում ելին ցեխի մեջ, իսկ «հայր-թագավորը» խիստ պատժում եր փոստն ուշացնող «անփույթ մարդուկներին»: XVII դարի հրովարտակներում հաճախ են պատահում կարգադրություններ փոստն ուշացնելու համար կառապաններին ճիպոտահար անելու մասին: Այսպես, 1671 թվին Ալեքսեյ Միխայլովիչ թաղավորի հրովարտակում, թաղավոր, վորին շողոքորթող պալատականներն անվանել են «հանդարտաբարո», ասված ե. «Կառապաններին մտրակի փոխարեն պինդ ծեծել ճիպոտներով, վորպեսի փոստը նշված ժամանակին տեղ հասնի»:

Փոստատարներին ստիպում ելին տեղափոխել ծանր բռնիք: Փոստային ատյանում ստացվում ելին հարյուրավոր աղերսագրեր՝ վողողված կառապանների արտասուներով:


Ինչի՞ մասին ելին «աղերսում» կառապանները:

«Բեռները լինում են տասը փութ և ավելի. խսիրներով կապած ձկներ և ել չըլիսես թե ինչ բաներ: Այդպիսի ծանրություններով ժամանակին տեղ հասնելը ուժից վեր բան ե: Ձիերը հոգնել են, չատերը կաղում են, միջոց չկա նոր ձիեր զնելու: Յերեք տարի յե աշխատավարձ չեն տվել, չորս տարի յե, ինչ բոլորովին չեն վճարել ձիերի ինամքի վարձը...»:

Մոսկվայան պետության դիմանադիտական և առևտրական



Հարաբերությունների զարգացումն արևմուտքի հետ առաջ րեալ կանոնավոր փոստի կազմակերպման անհրաժեշտություն։ Բոյարին Օրդին-Նաշչովինը, XVII դարի 2-րդ կեսի կրթված մարդկանցից մեկը, շատ լավ հասկանում եր այդ միջոցառման



Կառապանների պատմումը նիպոտներով

նշանակությունը, և նրա պահանջով 1665 թ. ոստարերկրացի Վան-Սվելենը նիգայում կազմակերպեց փոստ։ 1667 թ. կազմակերպվեց 2-րդ փոստը Վիճոյում։ Փոստը փոխադրվում եր շաբաթական 2 անգամ, ըստվորում արագությունն ընդունված եր մեկ ժամում 7 վերստ ամառը և 5 վերստ ձմեռն ու աշնանը։ Այդ փոստը գոյություն եւ ունեցել մինչև Պետրոս I-ի ու Ֆորմները։

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՍՏԸ ՌՈՒՍՍԱՑԱՆՈՒՄ

Պետրոս I-ը ձեռնարկեց մի շարք միջոցառումներ՝ բարելավելու փոստի աշխատանքը։ Զգալիորեն բարձրացավ փոստային տրամադրությունների քանակը։ Բոլոր միացված մարդերում կանոնավորվեց փոստային կապը։

1698 թ. Սեբիրի փոստի վերաբերյալ Պետրոս I-ի հրովարտա-

կով առաջին անգամ սահմանվեց մասնակոր գրադրությունների անձեւում ինձիությունը։ «Հրամայել յերբեք վոչ վոքի նամակը չբանալ և չնայել, վորպեսզի յուրաքանչյուրը, վճարելով պատշաճ վճար, հուսով լինի, վոր նրա նամակը համեմու յե իր տունը»։

Առաջման արժեքը վորոշվում եր տարածության հեռավորությամբ և շատ բարձր եր։

1700 թվին Պետրոս I-ը գրում է նամակ սեղանապետ Խրուչելին Մոսկվայից մինչև Վորոնեժ փոստ կազմակերպելու մասին։ Նա պահանջում էր, վորպեսզի փոստի յերթեւկությունը կատարվի իսկա վորոշված որերին և ժամերին։ «Յեթե փոստայինները նամակների փոստը վորոշված որերին և ժամերին չուղափակեն, կամ թեկուզ փոքր անփութության հետևանքով նամակներն ուշացնեն, այդ փոստայինները մեծ թագավորի կողմից կենթարկելն մահապատճի առանց վորեւե փրկության»։

1714 թ. Մոսկվայում և 1717 թ. Պետրովուրդում Պետրոս I-ը հիմնում է առաջին փոստանները (Պոշտամտեր)։ Անդը օվյան այս նոր անունը Պետրոսը բերել եր Հոլանդիայից։ Մուսական մեծ քաղաքներում կազմակերպվեցին փոստային գրասենյակներ։ Փոստային բոլոր ձեռնարկությունների վրա հսկելու համար հիմնված եր փոստային վարչություն, վորի գլուխ կանգնած եր փոստային գեներալ-գիրեկառը։

Յարի և խոչոր աստիճանակությունների չառալ գրադրությունն ուղարկվում եր հասուկ սուրճանողակներով—Պետրովեկուներով և թղթատարներով, վորոնք ոգտվում եյին փոստային հասուկ կառքերից։

Յեկատերինա II-ի թագավորության ժամանակ փոստային (յամային) գրասենյակը վերացվեց։ Փոստային գործն ամբողջովին անցավ փոստային գեներալ-գիրեկառը և փոստային գլուխ վարչության ձեռքը։

Յարական ծառայության մեջ փոստայինները ձորտային դրության մեջ եյին։ Փոստանները քաղաքներում սպասարկվում եյին փոստարաններով։ Քաղաքում նամակները բաժանելու համար նշանակվում եյին հասուկ ցրիչներ, վորոնք աշխատավարձ չեյին ստանում և ապրում եյին բացառապես բնակչության տվյալներով։

Փոստատարները, կառապանները և մյուս սոսրին ծառայողները փոստում զտնվում եյին այնպես, ինչպես զինվորական ծա-



XVIII դարի փոստային սուրհանդակ

ռայության մեջ։ Կողմանակի մարդկանցից վոչ վոքի չեր թույլատրվում այդ փակ շրջանի մեջ լինել։ Ծառայողների համարումը կատարվում էր միայն փոստայինների յերեխաներով։

Մարդու անձը ծաղրելու գերագույն որինակը փոստային գլուխալղիբեկտոր կոմս Ռաստոպչինի 1912 թ. հրամանն էր. «Փոստային աստիճանավորներից ծնված յերեխաներին համարել ամբացված փոստային վարչությանը . . .»։

Եժան արժեկը մարդն այն ժամանակներում. պետության վրա մի մարդու բուժումը տարեկան նստում էր քամիննը և կես կոպեկ։ Փոստային վարչությունը մի ոսորի 15 կոպեկով էր թաղում կարիքից և տանջանքից մեռած փոստային ստրուկին։

1822 թվին առաջին անգամ կաղմակերպվեց փոստային դպրոց։ Յուրաքանչյուր դպրոցավարտ պարտա-



XIX դարի 1-ին կեսի փոստատարի տարազը

վոր եր փոստային վարչությունում ծառայելու վոչ պակաս քան 25 տարի։

Փոստային կաղը բը յուրահատուկ լաշխում ունելին։ «Գերազանց վարք, ուսման և գեղագրության մեջ առաջադեմ համարվածներն ընդունվում են փոստային դեպարտամենտում աշխատելու վորակու գրասենյակային ծառայող։ իսկ լավ ձեռագիր չունեցողներն ընդունվում են ծառայության նահանգական և գավառական փոստային գրասենյակներում, իսկ լավ առաջադիմություն ցույց չտվողներն ընդհանրապես նշանակվում են փոստատարներ և պահակներ . . .»։

Այդպես, ձեռագրով եյին դատում մարդկանց մասին։

ՍԵՐԱՖՈՐԱՅԻՆ ՀԵՌԱԳԻՐ

1793 թ. Ֆրանսիայում ֆրանսական բուրժուական հեղափոխության ժամանակ տեխնիկ Շամպայ հնարում ե տեսողական սե-



Սեմաֆորային հեռագրի այրութենը

մաֆորային «Հեռագիր», վորը ժամանակակից ելեկտրական հեռագրի նախորդողն ե։


Սեմաֆորային հեռագիրը կազմակերպվել ե այսպես. քաղաքների միջև միմյանցից վորոշակի հեռավորության վրա կառուցվում էյին մեծ աշտարակներ, վորոնց վրա դրվում եյին լավ յերեացող պտտվող տախտակներ։ Տախտակների տարբեր գիրքերը նշանակում եյին թվեր և այրութենի տառեր։ Առաջին աշտա-

բակի ազգանշանորդը ստացված հաղորդագրությունը տառերով հաղորդում եր հարեան ազգանշանորդին, սա իր հերթին այդ ազգանշանները հաղորդում եր հաջորդ ազգանշանորդին, վորս կանգնած եր լինում յերբորդ աշտարակի վրա և այլն։ Այսպիսով լուրը 500—600 կիլոմետր հեռավորության վրա գտնվող քաղաքը կարող եր հասնել միքանի ժամում, և այդ ժամանակամիջոցը բոլորովին շատ արագ եր թվում, վորովհետեւ նամակն այդ նույն քաղաքներին հասնում եր 3—4 որից վոչ չուտ։

Շապոփի սեմաֆորային հեռագրով հաղորդված առաջին հեռագիրը հայունց, վոր քրանսական հեղափոխական զրբերը զրավեցին Կոնդե քաղաքը։ Այդ ժամանակ կայսում եր Կանվինափ նիստը։ Խսկույն Կոնդե քաղաքն ուղարկվեց կառավարական զեկուտ և այց զեկուտի պատասխանն ստացվեց այն ժամանակ, յերբ զեռ Կանվինափ նիստը չեր զերչացել։ Այն ժամանակ այդպիսի ընմաժարագործություն թողեց։ Շապոփին չնորդցին հեռագրական ինժեների անունը։

Սեմաֆորային հեռագիրը աշխարհի շատ յերկրներում և ընդունվել ու տարածվել։

Ռուսաստանում 1833 թվին հիմնվեց սեմաֆորային հեռագրություն Պետերբուրգի (Լենինգրադի) և Կրօնշտադտի միջև, իսկ 1838 թվին՝ Պետերբուրգի և Վարչավայրի միջև։




Ազգանշանների հաղորդումը դրոշականիրով

Հաղորդումները Պետերբուրգից մինչև Վարչավայր սեմաֆորային հեռագրով հաղորդում էր համար հարկավոր եր պահել մին-

չի 2000 «Հեռագրային ազգանշանորդ»։ Անձրևային կամ մառախուղար որերին հեռագրիրը չեր գործում։

Սեմաֆորային հեռագրի պայմանական ազգանշանները վերծանելու համար գոյություն ունելին հասուկ բառարաններ։ Իրենք հեռագրիչները բառարան չունելին և չգիտելին իրենց հաղորդածի բովանդակությունը։ Դա շատ կարեոր եր ցարական Ռուսաստանի կառավարության համար հեղափոխական շարժումների զեմ պայքարելու նպատակով։

Երեկորական հեռագրի գյուտարկ հետո կազի տեսողական միջոցներն ուժանդակ նշանակություն ունեն։ Որինակ՝ նավատօրմում մինչեւ վերջին ժամանակներս պահպանվել ե զբուակներով ազգանշումը, զրուցակի ամեն մի զրությունը համապատասխանում ե վորոշակի տառ, կամ այս կամ այն վիճակիը բարձրացնելով ազգանշումը, յերբ այդ զրուցակներից յուրաքանչյուրն ունի իր նախահայտ նշանակությունը։



Դրոշականիրով լուրեր հաղորդելու այրութենը

Ավեցիայի մէջ տեսողական կազի ամենահասարակ միջոցը աերոգրումում պայմանական նշաններ զնելն ե, առաջին հերթին այսպէս կոչված «T»-ի ցուցադրումը։ «T» տառի նկարը կարծես թե ներկայացնում է ինքնաթիռի սովորը, վորտեղ հորիզոնական զիծը (—) համապատասխանում է թելերին, իսկ ուղղացը (|) ինքնաթիռի սովորին կամ Փյուղելաժին։ «T»-ն ցուցադրվում է վայրեջքի հապարակում, յեթե ինքնաթիռի ընդունման համար խոչընդուներ չկան։ «T»-ն ցուցը ե տալիս նաև վայրեջքի ուղղությունը։ Վայրեջքի և թռիչքի ուղղությանը մասին են խոսում նաև աերոգրումի մյուս նշաններ՝ զուլափը յերշիկը, վոր ցուցը ե տալիս քամու ուղղությունը, ուժը, հողմացույցները և այլն։

ԿԱՊԸ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ¹

Սրեմտյան Յելլոպայում XIX դարերի սահմանադրության կատարված արդյունաբերական հեղաշրջումը և ձեռքի աշխատանքից մեքենայական արտադրությանն անցնելն առաջ բերեց արդյունաբերության և առևտրի չափանված աճում։ Կապիտալիզմի գարգացման այդ շրջանում հաղորդակցության նախկին դանդաղ միջոցներն անպետք են դուրս դալիս, և տրանսպորտը հազենում և չոգեշարժիչով։

Ֆուլտոնի առաջին չոգենավը ջուր իջեցվեց Ամերիկայում 1807 թ., իսկ Ստեֆենսոնի առաջին գնացքը չարժվեց Անգլիայում 1825 թվին։ Արդեն 1839 թ. Լոնդոնի և Բիրմինգամի միջև սկսեցին շրջել առաջին փոստատար վագոնները։

¹ «Կապիտալիստական կարգերում արտադրական հարարերությունների հիմքն արտադրության միջոցների կապիտալիստական սեփականությունն և, ըստվորում րացակայում և սեփականությունն արտադրության աշխատղների՝ վարձու բանվորների նկատմամբ, վորոնց կապիտալիստը չեւ կարող վուս սպանել, վոչ վաճառել, վորովհետեւ նրանք անձնական կախումից ազատ են, բայց վորոնք արտադրության միջոցներից գուրկ են, և սովոր չմենաբաւ համար ստիպված են իրենց բանվորական ուժը վաճառել կապիտալիստին և իրենց զգին կրել չահաղործման լուծը։ Արտադրության միջոցների կապիտալիստական սեփականության կողքին գործություն ունի և առաջին շրջանում լայն տարածում ունի ճորտային կախումից ազատված դյուզացու և արհեստավորի մասնավոր սեփականությունը արտադրության միջոցների նկատմամբ, սեփականություն, վորը հիմնված է անձնական աշխատանքի վրա։ Արհեստագործական արհեստանոցների մասնության ձևականացությունների փոխարեն յերեսն յեկան աշազին Փարթիկաներ ու գործարաններ, վորոնք զինված եյին մեքենաներով։ Ազնվականական կալվածքների փոխարեն, վորոնք մշակվում եյին արտադրության գյուղացիական պրիմիտիվ գործքներով, յերեան յեկան խոշոր կապիտալիստական տնտեսություններ, վորոնք տարգում են աղբուժիների հիման վրա և ոժաված են գյուղատնտեսական մեքենաներով» («Համեկ(ր)Կ պատմություն, համառոտ գասընթաց», եջ 169)։

Փոստն ու հեռադիրն սկսում են կենտրոնանալ պետության ձեռքում, իսկ տրամապորտի և կապի նոր յերեան յեկող միջոցները՝ բաժնետիրական ընկերությունների ձեռքում։ Զնայած կատարելագործումներին, այնուամենայնիվ փոստը հետ եր մնում բուռն զարգացող արդյունաբերությունից ու առևտրից և չեր բայլարարում նրանց պահանջները։ Անհրաժեշտ եր փոփոխել գրագրությունների փոխադրավճարի այն ժամանակ գոյություններուն սիստեմը։ 1840 թ. Անգլիայում, իսկ ավելի ուշ նաև այլ պետություններում, թղթակցության փոխադրման համար սահմանվում ե միասնական կուռային սակագին, ինչպես նաև փոստանիշներ։ Այդ ժամանակից ել լայն կերպով տարածվեցին փոստարկությունը։ 1874 թվին կազմակերպվեց համաշխարհային փոստային միություն, վորը սահմանեց միասնական կցւային սակագին և միության մասնակից բոլոր պետությունների համար միջազգային փոխանակումների կանոնները, վորովհետեւ փոստի նախկին կազմակերպությունը, պարփակված առանձին յերկրների սահմաններում, չեր կարողանում րավարարել աճող պահանջները։

Կապիտալիստական յերկրների փոստային փոխանակման գդալի մեջացումն անհրաժեշտություն առաջացրեց արագացներու մշակումը։ XIX դարի 80-ական թվականներից փոստային խոչը ձեւնարկությունների ներքին տրանսպորտն սկսում է միանինից յաջիկայի յենթարկվել, 1890 թվին Ամերիկայում հարցում ե շումակերով մեքենա ելեկտրական շարժիչով։

1869 թվին Վիեննայում պըռֆեսոր Գերմանը կիրառեց փոստային առաջին նոր ձեւ—բաց նամակը։

Փոստային կապը ցարական Ռուսաստանում, վորն Արեմտյան Յելլոպայից և Ամերիկայից ավելի ուշ մտավ կապիտալիզմի շրջանը, իր զարգացմամբ հետ եր մնում։ Ռուսաստանում յերկաթուղային ցանցն անհչան եր, դրա համար ել սայլային տրանսպորտը դեռևս հանդիսանում եր փոստի փոխադրման հիմնական միջոցը։


Ցարական Ռուսաստանում, հաշվի առնելով աղդաբնակության քանակը, փոստային փոխանակումները լինստ կերպով հետ եյին մնում ուրիշ յերկրների փոխանակումներից։ 1905 թ. ԱՄԵՐԻԿԱ մի մարդուն ընկնում եր 77 նամակ և 54 տպագրական աշխատություն, իսկ Ռուսաստանում՝ ընդամենը 6 նամակ և 4 տպագրական աշխատություն։

Ազգարձակության հիմնական մասը — գյուղացիությունը փոստով չեր սպասարկվում: 1865 թվին կազմակերպված զեմստվային փոստը թղթակցություն հասցնում էր միայն գավառային վարչություններին:

Արժեքը ցույց տվող նախորոք կնքված ծրաբները մնուսաստանում առաջին անգամ կիրառվեցին 1845 թ., իսկ առաջին փոստանիչը — 1857 թվին: 1848 թվից սահմանվեցին փոստարկը՝ ներ, վորոնք վերացնում ելին հասարակ թղթակցության հանձնումը փոստային ձեռնարկություններին կամ մանրածախ խանութներին, վորտեղ առաջներում կային փոստային ընդունման կայաններ:

ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐ

Կատարելով բուրժուազիայի պահանջը, յերիտասարդ գիտությունը XIX դարի սկզբում ոգտագործում է մինչ այդ ելեկտրությունը թարի սկզբում ոգտագործում է մինչ այդ ելեկ-



Զեմմերինգի ելեկտրոնիմիական հեռագիրը

Հաղորդիչի և ընդունիչի մեջ լարերը նշանակված եյին այրուենի տառերով: Վորեկ տառ հազորդելու համար համապատասխան լարին միացնում էլեկտրական հոսանք: Բնդունիչի մեջ (ծծմբաթղվութիւնի լուծույթով անոթ) այդ հաղորդալարից անջատվում ելին գազի բշտիկեր, վորոնք նշանակում ելին հաղորդած տառը:


Մրականության բնագավառում կատարված գյուտերը կապի միջները բարելավելու համար:

Այդ ասպարիգում համարյա ամեն մի գյուտ անպայմանուրեն ովտագործվում է հեռագրի համար: Հեռագրի կատարելագործման անհրաժեշտությունն իր հերթին առաջացնում է ելեկտրականության ուսումնագիրը:

1809 թվին գերմանական քիմիկին գնարեց ելեկտրոքիմիական հեռագրը՝ հիմնված ելեկտրական հոսանքի հատկության վրա՝ աղաջուրը տարրալուծելու ջրածնի և թթվածնի:

Ելեկտրոքիմիական հեռագրությունը գուրս յեկալ կապի համեմատարար դանդաղ, թանդ և ծանր միջոց, վորի սպատճառով և չարածնից: Նա սպահանջում էր հարեան կայանների միջև մեծ քանակությամբ լարեր և գործում էր ընդամենը 3 կիլոմետր տարածության վրա:

1832 թ. Շիլինգը մոռասատանում հնարեց սլաքավոր հեռագրական ապարատ, վորը հիմնված էր ելեկտրական հոսանքով մագնիսասլաքը շեղելու սկզբունքի վրա: Այդ ապարատը պահանջում էր 8 լար: Սակայն Շիլինգը մեռավ, առանց ավարտելու իր աշխատանքը, նրա գաղափարն ոգտագործեցին արտասահմանում:




Շիլինգի պահային ապարատը:

Հաղորդիչի միջի սպիտակ կամ սև մասների սղմումը ընդունիչի մեջ տանցացնում էր մագնիսական սլաքերի թեքում մեկ կամ մյուս կողմը: Սլաքերի հետ միասին շուր ելին գալիս թղթե շրջանակները սպիտակ կամ սև կողմով, վորը և նշանակում էր տառ կամ թիվ:

Մի ուրիշ ոռւս գյուտարար՝ ակադեմիկոս Յակոբին կառուցած այն ժամանակվա համար միանգամայն կատարելագործված հեռագրային ապարատ էլեկտրոմագնիսականությամբ, բայց նրա գյուտը սահմանափակ գործադրություն ունեցավ:

1837 թ. ամերիկացի Սամուէլ Մորդեն հնարեց զբող ելեկտրոմագնիսային հեռագրային ապարատ, վորը վերջապես ճանաչվեց ընդհանուրի կողմից: Սակայն գյուտարարը ստիպված



Մորգեյի ելեկտրամագնիսային հեռագրական առաջին ապարատը յեղավ 7 տարի միջնորդել, մինչև վոր 1844 թ. Ամերիկայի վաշինգտոն և Բալտիմոր քաղաքների միջև չահագործման համար կառուցվեց առաջին հեռագրադիրը:

Այս մոմենտից սկսած հեռագրի նշանակությունն արագ կեր-

պով գնահատվեց և ամենուրեք սկսեցին կառուցվել հեռագրագծեր:

XIX դարի յերկրորդ կեսին անհրաժեշտություն ե զգացվում ավելացնելու հեռագրի գործողության հեռավորությունը և արագացնելու նրա աշխատանքը:

Գաղութիներում իրենց տիբապետությունն ամրագնելու և միջազգային առևտրական կապերը բարելավելու համար կապիտալիստական պետություններն սկսում են կառուցել հեռավոր հեռագրագծեր:

Նյու-Յորքի և Սան-Ֆրանցիսկոյի միջև յեղած տրանսամերիկան մեծ զիծը միացնում և Ատլանտյան և Խաղաղ օվկիանոսները: Հնդկական հեռագիրը, անցնելով ամբողջ Յեվրոպայով և Ասիայով՝ Լոնդոնը միացնում է Կալկաթայի հետ: Պետերբուրգը (Լենինգրադը) Սիբիրյան մագիստրալով միացվում է Իրկուտսկի, իսկ ավելի ուշ՝ նաև Վլադիվոտովկի հետ, միացնելով Բալթիկ ծովը Խաղաղ ովկիանոսի հետ:

1850 թ. զցվում է ովկիանոսային առաջին ստորջրյա կարելը Անգլիայի և Ֆրանսիայի միջև, իսկ 1865 թ. Յեվրոպայի և Ամերիկայի միջև: XIX դարի վերջում բոլոր ծովերն ու ովկիանոսները, բացի բևեռային ջրերից, կապվում են հեռագրակարելների ցանցով: Հեռագրալարերը խիտ ցանցով պատում են ամբողջ յերկրագունդը: Հեռագիրը ծառայում է համաշխարհային կապիտալիստական ամբողջ տնտեսությանը:

Հեռագրի աշխատանքի արագացման համար հնարյում են արագաշարժ, տառատիպ ավտոմատ և բազմասկատիկ հեռագրական ապարատներ:

XX դարի սկզբին հնարյում և հեռագրային «տելետայպ» ապարատը, գրամեքենայի տառաշարով, վորը գործադրվում է բանկերն ու խոշոր առևտրական Փիբրմաները բորսաների հետ կապելու համար:

ՀԵՌԱԽՈՍ

XIX դարի կեսին, կապիտալիզմի զարգացման հետ միասին, առաջանում են արդյունարերական խոչոր ձեռնարկություններ և ինդուստրիալ հակա քաղաքները: Տրեստները, բանկերը, բորսաները և բանվորների միլիոնավոր բանակ ունեցող գործարանները կառավարելու համար կապի նախկին միջոցները, այդ թվում նաև հեռագիրը, այլևս անբավարար են համարվում:

1876թ. խուլ ու համբերի ուսուցիչ, ամերիկացի Բելլը հնարյում և առաջին հեռախոսային ապարատը՝ հեռախոսային փողակը: Հեռախոսային փողակը բաղկացած էր փայտե ողակից, վրան ձգած խոզի աղիքի թաղանթ, կոճից, վորի մեջտեղում մագնիսն և պողպատե թիթեղ, վոր չփակում է թաղանթի հետ:

Ասսակցության ժամանակ թաղանթը տառանվում էր, թիթեղը չորժման մեջ եր դրվում, և կոճի մեջ առաջանաւմ եր ելեկտրական հասանք: Այսօր եր կառուցված նաև ընդունիչը: Այդ սարքի ողնությամբ կարելի յեր խոսել 500 մետր տարածության վրա:

Հաղորդման հեռավորությունն ավելացնելու համար փորձում ելին մեծացնել հեռախոսը: Ապարատը շնուր ելին այն չափեց, վոր խոսելիս նաև ծածկում եր համարյա ամրող գեմքը: Հարմարության համար չնեցին ապարատներ յերկու հեռախոսից, մեկով խոսում ելին, մյուսով՝ լսում:

Չնայած Բելլի հեռախոսային ապարատի անկատարությանը, այնուամենայնիվ նա 1877 թ. գործնապես կիրաւում էր Ամերիկայում և Յերկոպայում:

Հեռախոսի գյուտան ավելի ևս ուժեղացրեց կապը, հեռախոսը թույլ եր տալիս ըստերի միջոցով հաղորդելու մարդու սովորական կենդանի խոսակցությունը:

XIX դարի վերջին հեռախոսային ապարատն ու ձեռքի հեռախոսակայանների սարքավորումն ավարտում էն իրենց գարւացումը և ձեռք բերում մեզ ծանոթ տեսքն ու կառուցվածքը:

Մինչև XIX դարի վերջը քաղաքների հեռախոսային կայանների մեծամասնությունը պատկանում էր բաժնետիրական ընկերություններին և խոչը յեկամուտ և տալիս նրանց: Հեռախոսության ամենուրեք չափազանց բարձր է: Հեռախոսով ողարվում ելին միայն պետական հիմնարկները, առևտուրական ձեռնարկությունները, վոստիկանությունը և հարուստ մարդիկ:

Պետական ապարատի աճած կազմակերպական կազմերը, հեռախոսի յեկամտարերությունն ու քաղաքական հետապնդման նպատակներով հեռախոսն ողտագործելու հնարավորությունը պետությանը և քաղաքային ինքնայիւրություններին ստիպում էն դնել մասնավոր կայանները, և հեռախոսային տնտեսությունը զառնում և պետության սեփականությունը:

Քաղաքային հեռախոսակայանների բաժանորդների թվի աճաման հետ մխարին, վորը հասավ միքանի տասնյակ հաղարների, ակնհայտ դարձան կայանները հեռախոսավարուհիների միջոցով ձեռքով սպասարկելու թերզությունները: Բաժանորդների թվի

աճումը ստեղծեց յենթակայաններ կառուցելու անհրաժեշտությունը, վորը զանդաղեցնում ու բարդացնում եր հեռախոսային կապը: Զերծով սպասարկվող հեռախոսակայաններում հեռախոսավարուհիների թիվը մեծ քաղաքներում սկսեց հասնել միքանի հարյուրի, նույնիսկ միքանի հազարի:

Յերկար ժամանակ չեր հաջողվում բաժանորդների ավտոմատ միացման կայաններ կառուցել, վորովհետեւ այդ տարիներին ճշգրիտ մեքենաշխնության տեխնիկայի և ելեկտրոտեխնիկայի դրությունը թույլ չեր տալիս այնպիսի բարդ կառուցվածքների մեջ ինչպիսին ավտոմատ հեռախոսակայանը կառուցվել և Ամերիկայում իմպերիալիստական պատերազմից հետո խոչոր քաղաքների ձեռնաշխատ կայանների մեծ մասն արդին փոխարինվում ե ավտոմատ կայաններով: Անհապաղ յերեվան գալիս նաև նոր սիստեմի անտեսական ոգուտները՝ կայանի կառուցման ծախսերը չուտով ծածկվում են: Հեռախոսային ավտոմատ ցանցը տնտեսական շահավետությունը կայանում է նաև հեռախոսային կաբեների քիչ ծախսման մեջ, քանի վոր քաղաքներում միքանի սայոնական ավտոմատ հեռախոսակայաններ կառուցելիս կարելի լարերի միջին յերկարությունը յուրաքանչյուր բաժանորդի համար խստ կրծատվում է, իսկ բաժանորդների թիվը կարող ե անսահման լինել:

ՌԱԴԻՈ

XIX դարի վերջը բնորոշվում է նրանով, վոր կապիտալիստների անցցալ իր զարգացման բարձր և վերջին փուլին՝ իմպերիալիզմի:

Իմպերիալիստական յերկրները ձգտելով աշխարհի և զարգությունների նոր վերաբաժանման, ուժեղացնում էն իրենց սպառավիճակները: Ստեղծվում են հսկայական նավատորմիզներ և միլիոնավոր ցամաքային բանակներ: Այլպիսի նավատորմիզներն ու բանակները յեկամքարել և թշնամի պետությունների տերիտորիաների վրայով գաղութների հետ հարաբերություն պահպանել լարային կազի՝ հեռազբի և հեռախոսի միջոցով՝ անհնարին և դառնում:

Այդ ամենը հասցըեց մի ամբողջ շարք փորձերի՝ իրականացնելու անլար կապը:

Ռադիոյի առաջին գյուտարարը ուսւու գիտնական Ա. Պո-

պովն եր: Սակայն բժամիտ ցարական կառավարությունը Պո-
պովի աշխատանքից համապատասխան յեղակացություններ
չհանեց, և ուղիոյի ծննդավայր Ռուսաստանն այսպես ել սեփա-
կան ռազիուարդյունարերություն չունեցավ և մինչեւ Հոկտեմ-
բերյան սոցիալիստական Մեծ հեղափոխությունը լիակատար
կախման մեջ եր արտասահմանից:

Ռազիոյի, կամ, ինչպես ասում եյին մինչև 1914 թ., անթել
հեռագրի գյուտը կապի զարգացման համարյա նույնական հեղա-
փոխություն եր տեխնիկայի մեջ, ինչպես իր ժամանակին կա-
տարել եր ելեկտրական հեռագրի գյուտը: Զե վոր միմիայն
այժմ, յերբ մարդկությունը տեր և դարձել կապի այդ միջոցին,
կարելի յե խոսել տարածության իսկական հաղթահարման մա-
սին: Յեկ իրոք, կարողացա՞ն արդյոք լարային հեռագիրն ու
հեռախոսը, վորոնք հակայական դեր են խաղում աշխարհի բո-
լոր յերկրների տնտեսական կյանքում, վերջնականապես հաղ-
թահարել տարածությունը: Իհարկե վոչ: Զե վոր հեռագիր
ուղարկելու կամ վորեև մեկի հետ հեռախոսով խոսելու համար
հարկավոր և նախ լար անցկացնել այնակազմ, իսկ լարը կարելի յե
անցկացնել միայն այն վայրում, վորտեղ մարդը կարող է վոտք
դնել: Ուրեմն անանցանելի տարածությունները, որինակ՝ ճահ-
ճուտները, հեռախոսի և հեռագրի համար քիչ մատչելի յեն: Իսկ
ի՞նչպես կազմակերպել շողենավի կազը մայր ցամաքի հետ, ինք-
նաթիռի կապը մի այլ ինքնաթիռի, կամ աերոդրոմի հետ, յեր-
կու չողենավերի կապը, այս բոլոր գեղագերում ել, — հեռագրա-
յին և հեռախոսային կազն անհնարին ե: Այդպիսի դեպքերում
մինչ ռազիոյի գյուտը ստիպված եյին լինում դիմելու հնակույն
միջոցների, չչակների, սուլիչների, խարույկների, զրոշակների
թափահարման և պայմանական նշաններ կախելու: Զե վոր հա-
մարյա ամբողջ աշխարհն արգեն պատած եր լարային ցանցով,
յերբ սառեցին բենային յերկրների հետազոտողներ Անդրեն ու
Սկոտար, վորոնք փրկության հույս չունեյին այլևս: Իսկ ին-
չո՞վ կարող եր ոգնել խիտ բնակված յերկրներով անցնող լարը
նրանց, ովքեր կորսույան եյին մատնվում սառուցների մեջ:

Յեթե 1934 թ. ռազիոն գոյություն չունենար, չտփաղանց
դժվար կիրակ փրկել կորսուից չելուսկինյաններին:

1937 թ. ռազիոն ոգնեց մեր պահճակի ողաշուներին նվաճելու
Հյուսային բենուը: Աղային ջոկատը Հյուսային բենու տա-
րավ Խորհրդային Միության հերոս Վոլոպյանովը: Յե՞վ ամ-

բողջ ճանապարհի ընթացքում և' բուն Հյուսային բենուում և'
վերադարձին ուղիոն հնարավորություն տվեց ողանավերին խո-
սակցելու միջանց հետ, ուղիոն ոգնեց նրանց ավելի արագ և
ճիշտ համելու նպատակին և վերադառնալու:



Խորհրդային Միության Հերոս Ն. Տ. ԿՐԵՆԿԵԼ

Ինքնաթիռները վերադարձան Մոսկվա: Սառցադաշտի վրա
մնաց ձմեռելու քաջարի հետազոտողների, մեծ մեծ հայրենիքի
հավատարիմ զավակների քառյակը: Բայց նրանք միայնակ չեյին:
Մենք ամեն որ խոսում եյինք ձմեռողների հետ, նրանցից ստա-
նում եյինք մեզ անհրաժեշտ աեղեկությունները:

Նրանք ունեյին ռազիոկայան, վորը կառավարում եր չքո-
նչանակիր ռազիոս ընկեր Կրենկելը:

Սառայինյան մարշրուտով սրացան ստալինյան հպարտ սագի-
ների, Խորհրդային Միության Հերոսներ Զկալովի և Գրիգորի
Ինքնաթիռները, վորոնք անորինակ անվայրելք թուչք կառավարեաւ:

ցին ԽՍՀՄ-ից Հյուսիսային բևեռի վրայով գեղի Ամերիկա։ Իտու-
դիոյի ոգնությամբ ամբողջ ճանապարհին նրանց տեղեկություն-
ներ ելին հաղորդում յեղանակի մասին, ուղիոն ոգնեց նրանց
հաստատուն կերպով պահելու նշված կորսը։

1938 թ. ուղիոն ոժանդակեց հերոսական «Ռոդինա» ինքնա-
թիուն, վորի մեջ գտնվում ելին պահանձալի ողաչուճիներ Պոլինա
Ոսկենկոն, Վարենտինա Գրիգորովորվան և Մարինա Ռասկո-
վան, Հաջող անվայրեցք թուչք կատարելու Մոսկվայից մինչև
Կոմսոմոլսկի շրջակա տարգաները։

1939 թ. ապրիլի 28-ին Խորհրդային Միության Հերոս Կոկ-
կինակին շտուրման Գորդիենկոյի հետ միասին անվայրեցք
թուչք կատարեց Մոսկվայից մինչև Ամերիկայի Միացյալ նա-
հանգները։ Ինքնաթիուի Մոսկվայից թռչելու մոմենտից մինչև
նրա վայրեցքը Միսկոու կղզում (Հյուսիսային Ամերիկա) հերո-
սական անձնակազմը ուղիոյով անընդհատ կազ եր պահպանում
Մոսկվայի հետ։

Յերկու տարուց ավելի սաստցների մեջ սառած և դրեյֆող
«Գեորգի Սելով» նավում ապրում ելին Խորհրդային 15 անվեհեր
ծովայինները։ Մագիստրի ողնությամբ նրանք կազ հաստատեցին
սացահատի և Մեծ ցամաքի միջև։

Սացահատի ուղիոկայանի հսկողությունը տանում եր
ավագ ուղիստ Ալեքսանդր Պոլյանսկին, վորը շատ եր լողացել
Արկադիկայի նավատօրմի նավերով և իր փորձվածության և
դործիմացության համար «յեթերի սնայպեր» անունն եր վաս-
տակել։

Միմիայն ուղիոն վերջնականապես հաղթահարեց տարա-
ծությունը։ Միմիայն այժմ ե, վոր ովաչուն հնարավորություն
ստացավ ողում զրուցելու յերկը, աերոլրոմի, ուրիշ ինքնա-
թիուի հետ։ Միայն այժմ ե, վոր ովկիանոսում աղետի յենթարկ-
ված նավը հնարավորություն ունի ողնության կամչելու մի ու-
րիշ նավի։ Խոկ հեռավոր ձյունապատ կղզում ապրող մարդիկ,
վորտեղ չի կարելի լար անցկացնել և հեռագրական սյուներ
տնկել, միայն հիմա կարող են զրուցել մայր ցամաքում մնացած
իրենց ընտանիքների հետ։

Մագիստրիմիկան գեռ շատ յերխասարգ ե, բայց նա արագ
ե դարձանում։ Ներկայումս ուղիոյի միջոցով վոչ միայն հեռա-
գրեր են հաղորդում և հեռախոսային խոսակցություններ վա-

րում, այլև հաղորդում են նկարներ, գծագրեր և մարդու ձառի
հետ միաժամանակ նաև մարդու պատկերը։

Տասնյակ, հարյուր-հազարամյակը մարդիկ կապված էն ժամա-
նակակից բոլոր տեսակի փոստային աշխատանքի հետ՝ հեռա-
խոսի, հեռագրի, ուղիոյի։ Գիտության՝ Փիզիկայի, քիմիայի,
մաթեմատիկայի բոլոր նվաճումները, տեխնիկայի բոլոր գյու-
տերը, արանսպորտի զարգացման բոլոր հաջողությունները՝ գե-
րարագ շոգեքարշերը, շոգենավերը, ավտոմոբիլները, ինքնա-
թիունները, յերկաթուղարձերը, ժամանակակից առաջավոր մար-
դու ամրող բազմազան միաբը՝ այս բոլորն ոգտագործվում ե
մարդկանց հաղորդակցումը բարելավելու համար։

Մարդկության զարգացումը, նրա կուլտուրայի վերելքը,
այդ բոլորն անխորհիորեն կապված են կապի տեխնիկայի զար-
դացման հետ։

ԿԱՊԻ ՎԻՃԱԿԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ՄԻՒԶԵՎ ՆԵՐԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԱՅԺՄ

Հին, նախահեղափոխական Ռուսաստանը հետամնաց յերկիր էր: Բայ արդյունաբերական արտադրանքի քանակի և կապի տեխնիկայի զարգացման նա վերջին տեղն էր գրավում աշխարհի խոշոր կապիտալիստական յերկրների մեջ:

Ինքնակալության ժամանակ վոստ-հեռագրական կապի նկատմամբ ամբողջ հոգատարությունը բնորոշվում էր յերկու նպատակով: Առաջին նպատակը կալվածատիրական-բուրժուական կարգերի պաշտպանումն էր: Յերկրորդը առեւտրական նպատակն էր: Կովկասի, Միջին Ասիայի կամ Սիրիաի ժողովուրդների հետ չահավետ առեւտուր անելու համար կապիտալիստներին հարկավոր էր մշտական կապ ունենալ տեղերի իրենց գործակալների հետ:



Փոստի փոխադրումը Միջին Ասիայում XIX դարում

Այս ոլատճառով է, վոր մինչեւ հեղափոխությունը Ռուսաստանի վոստ-հեռագրական ցանցն ընդգրկում էր միայն քաղաքները, իսկ դյուղերը, առուները, զւաղները, ուլուսները—յերկրի այն ահազին մասը, վորտեղ ապրում էր բնակչության համարյա 85 տոկոսը, զուրկ էր կապի վորեւ միջոցից:

Այն յերկիրը, վորն աշխարհին տվեց ուղիոյի գյուտարար ճարտարապետ Ա. Ս. Պոպովին, մինչեւ հեղափոխությունն ուներ ամենավատ ճանապարհները, ամենանոր հեռագրային ցանցը, ամենազանդադաշտը ու անվատահելի վոստը:

Ռուսաստանի հսկայական տերթատորիայի վրա 1913 թվականին կար ընդամենը 12.800 փոստային հիմնարկ, վորոնք, ինչպես մենք արդեն զիտենք, տեղավորված եյն գլխավորապես քաղաքներում և միայն առանձին դեպքերում խոչոր դյուղերում:



Փոստի փոխադրումը Բայկալ լիի վրայով

Մինչեւ Հոկտեմբերյան Մեծ հեղափոխությունը մեր յերկրում չկար վոչ մի դյուղական նամակատար: Նամակ ոտացողն էնքը պետք է գնար փոստ, յերբեմն կտրելով 15 և 20 կիլոմետր տարածություն:

Սակայն ցարական Ռուսաստանի գյուղացին գյուղական նամակատարի այնքան ել չատ կարիք չուներ: Նախ՝ գյուղացիության հսկայական մեծամասնությունն անգրագետ էր: Յերկրորդ՝ թույլ չեր արվում տաղաքել այնպիսի լրագրեր, վորոնց կարգալը նրանց կարող էր վորեւ ոգում տալ: Յարական կառա-

վարության կողմից գյուղերի վերնախավի համար հրատարակ-
վող «Աւլսկի վեստնիկ» լրագիրը լույս եր ընծայվում 30.000
որինակ և ուղարկվում եր կարգածատերերին, կուլակներին,
գալառակային տանուտերերին ու գրագիրներին: Բոլշակիյան
լրագրերն այն տարիներին անեղալ կերպով եյին լույս տեսնում,
և փոստն այդպիսի լրագրեր, իհարկե, չեր ուղարկի գյուղացիա-
կան ծիներին:

Յերբորդ՝ գյուղական աղքարնակությունը համարյա նամակ
չեր ստանում: Ո՞վ կարող եր նամակ գրել գյուղացուն մինչեւ
հեղափոխությունը և ինչի՞ մասին: Միայն նրա արտագնաց աղ-
դականը, վորին կարիքը և հողի սակալությունը քշել եյին քա-
ղաք վաստակ գտնելու, վորը հայտնում եր հարազատներին,
վոր նրանից դրամ չսպասեն, վոր քաղաքում վաստակ չկա, իսկ
կյանքը թանդ, կամ նա ծանուցագիր կստանար դատարանից,
ուր նրան կանչում եյին բազմաթիվ հարկերից վորեւ մեկը չվե-
ճարելու պատճառով:


Բայց այդպիսի նամակների համար ել գյուղացին ստիպված
եր լինում գնալ տասնյակ կիլոմետր հեռավորության վրա դաշն-
վող գագառակե:

Յարական թուսաստանի ծառայողների մեջ չկար ավելի
ընկձված և ստորացած կերպարանք, քան հեռագրիչը կամ նա-
մակատարը:

«...ամենաստորին սկսնակ ծառայողներին,—գրում եր
լենինը փոստի հեռագրական ծառայողների մասին,—վճա-
րում են տառացիորեն քաղցի մատնող վճարներ, և հետո
սահմանված ե անվերջ աստիճանավորումներ քառորդ կամ
կես ոռորու հավելումներով, ըստվորում քառասուն—
հիսուն տարվա ծանրաքարշ աշխատանքից հետո չնչին
թոշակի հեռանկարը պետք ե ել ամելի ամուր ստրկաց-
ներ այդ իսկական «չինովիկական պրոլետարիատին» (Լե-
նին, Յերկերի ժողովածու, Հ. Վ., Էջ 62—63):

Յարական թուսաստանի փոստ-հեռագրատան ծառայողի ար-
տաքին տեսքը միայն ծածկում եր նրա դառն և անելանելի կա-
րիքը: Փոստում ծառայելը շատ դժվար եր. աստիճանավորն
աշխատում եր որական 16—20 ժամ. իսկ աշխատավարձը չնչին
եր, ավելի քիչ, քան մյուս գերատեսչությունների պետական ծա-
ռայողներինը:

Աշխատավարձի կեսը ծախսվում եր հազուստի վրա. չե վոր



Կամչատկան փոստը 1881 թվին

իշխանությունը պահանջում եր, վոր տարազը գեղեցիկ լիներ,
վոր կոճակները փայլեյին: Վատ հազնված ստիճանավորն աշ-
խատանքից դուրս չպրտվելու վտանգի տակ եր: Յել ընտանի-
քից կտրելով վերջին կոպեկները, աստիճանավորներն աշխատում
եյին չվիթավորել իշխանության հայացքը իրենց «անհաճո» տես-
քով:

Փոստ-հեռագրական աշխատողների մեծ մասը անտրտունջ
քարչ եր տալիս գաժան աշխատանքը: Միայն յերեմն լսվում
էր աշխատանքից տանջված և աղքատիկ աշխատավարձ ստացող
մարդկանց բողոքի ձայնը:

1905 թ. Պավլովսկի փոստի գրասենյակի պետը զեկուցա-
գիր ներկայացրեց այն մասին, վոր նա անկարող և «հաջողու-
թյամբ տանել ծառայությունը»: Այդ զեկուցագրին կցված եր
փոստի աշխատանքի նկարագրը: Նա գրում եր.

«Առավոտյան ժամը 7-ից յես սկսում եմ աշխատան-
քը, իսկ բոլոր զբաղմունքներից ազատվում եմ զիշերվա-
ժամը 2—3-ին: Հասարակ և պատվիրված բաժիններում
աշխատում են աստիճանավորը և փոստատարը: Բոլոր գոր-

Ֆուստառարները վերջանում են գիշերվա ժամը 1—2-ին։
Փոստառարները հոգնածությունից քնում են գրիչը ձեռքներին։ Աստիճանավոր պատույան, վորը վարում է ամբողջ հաշվետվությունը, մենակ չի հասցնում աշխատանքը, թեև որական աշխատում է 15 ժամից վոչ պակաս։

Ուժից դուրս աշխատանքը նեղված սենյակում, ժամանակի սղության պատճառով անկանոն սնվելը շատ վատ են ազդում ծառայողների առողջության վրա, և նրանց մեծամասնությունը աշխատանքն այդպես շարունակելով շուտով՝ կդառնա անաշխատունակ»։

Այդ բողոքն, իհարկե, վոչ մի արդյունք չտվեց։ Փոստային աստիճանավորի աշխատանքը դարձյալ մնաց լարված և ծանր։ Այսպես ել ուժից վեր եր հեռագրիչի աշխատանքը։ Հեռադրական ապարատի վրա կիբառվում եր շահագործման նուրբ մտածված ձեւ։ Հեռագրիչներն աշխատում եյին առանց հերթափոխության 12, իսկ յերեմն ել 24 ժամ։ Սակայն աշխատելով որ ուղիչեր՝ հեռագրիչները չեյին վերջանում աշխատանքը, վրույնեակե հեռագրատան հաստիքը շատ փոքր եր։ Իշխանությունը նոր աշխատողներ չվարձելու համար հնարեց «տուգանքային» հերթապահության սիստեմ։ Ապարատանոցի ավագը տուղանքի զրում դրում եր հերթապահների կողմից կանոնների ամենափոքր խախտումը։ Խուսափել խախտումներից համարյա անհնարին եր։ Ուժապատ մարդեկ մնչում եյին, նրանք քնում եյին սեղանների, աթոռների վրա, ապարատի մոտ, բլանկների կույտերի վրա։ Այդ «գանցանքների» համար հեռագրիչները տուղանքում եյին։ Նրանք հերթապահում եյին լրացուցիչ միքանի ժամ։

Փոստ-հեռագրատան աշխատողների հյուծող աշխատանքը և կյանքի նյութական ծանր պայմանները վորոշ տեղերում հուզմունք եյին առաջացնում։ Սակայն այն ժամանակ այդ հուզմունքը հեղափոխական բնույթ չեր ընդունում։ Փոստ-հեռագրատան աշխատողները մեծ մասմբ այսպես կոչված պետիցիաներով՝ բողոքներով դիմում եյին իրենց իշխանավորներին և պետությանը, խոսելով իրենց աշխատանքի ու կյանքի չափազանց ծանր պայմանների մասին, խնդրում եյին իշխանավորներից ուշադրություն «գարճնել այդ բանի վրա»։ Փոստ-հեռագրատան վարչության աշխատողներից միայն առանձին հեղափոխական տարրերն եյին փորձ անում գործադուլ կազմակերպելու։ Սա-

կայն այդ ցրված յԵլույթներն արագորեն հնչվում եյին ցարական կառավարության կողմից։

Միայն 1905 թ. հունվարյան դեկբերից հետո բանվորական շարժման ընդհանուր վերելքը հեղափոխականացրեց փոստ-հեռագրային ծառայողների լայն մասսաներին։ Յեկ 1905 թ. սկզբից Ռուսաստանի մի ամբողջ շարք քաղաքներում տեղի ունեցան փոստի և հեռագորի աշխատողների գործադուլուներ։

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Հեղափոխության առաջին իսկ որից խորհրդային կառավարությունը ձեռնամառխյեղավ փոստ-հեռագրական գործի վերակազմությանը։

Հայսնի յե Վլադիմիր Իլյիչի արտահայտությունն այն մասին, վոր

«Սոցիալիզմն առանց փոստի, հեռագորի, մեքենաների ամենազատարկ Փրազ ե» (Լենին, Յերկերի ժողովածու, հ. XXII, էջ 495)։

Յեկ խորհրդային իշխանության քաղաքականությունը փոստ-հեռագրական գործի վերակազմության ասպարիզում ամբողջապես վորոշվեց այդ արտահայտության եյությամբ։

Թե վորքան կապի գործն առաջ ե գնացել Խորհրդային յերկրում՝ համեմատած նախապատերազմյան տարիների հետ, ցույց էն տալիս հետեւյալ թվերը. 1938 թ. Խորհրդային Միության մեջ կային 43 հազար փոստային կետեր, համարյա 3½ անդամ ավելի, քան մինչհեղափոխական ցարական Բրուսաստանում։ Դրանից ավելի քան 36 հազար կետ գտնվում են վոչ թե քաղաքներում, այլ գյուղերում, կոլտնտեսություններում և խորհացնեասություններում։

Յերրորդ հնգամյակում կրացվեն կապի ավելի քան 10 հազար նոր ձեռնարկություններ։

Միանդամյան նոր գործ ե հանգիսանում գյուղական նամակատարների 155-հաղարանոց բանակի կազմակերպումը։ Նրանք խորհրդային գյուղի միլիոնավոր գյուղացիներին նամակներ, լրագրեր և ժուռնալներ են հասցնում։


Ստալինյան հնգամյակների տարիներին փոստային կապը գյուղում գարձավ անձանաչելի։ Որինակ, Սարատովի մարզի, Բալակովի շրջանի Նատալիին գյուղում ամեն որ յերկու փոստատարներ կոլտնտեսականների տներն են տանում լրագրեր, մինչև 50 նամակ, 10—12 դրամական փոխադրություն, համարյանույնքան ծանրոցներ և 3—5 հեռագիր։ Նատալիին գյուղի կոլ-

տհունականներն իրենց հերթին ամեն որ ուղարկում են լոր-
Հըրդային Միության գանապան ծայրերը և՝ նամակներ, և՝ դրա-
մական մուսավորություններ, և՝ ծանրոցներ, և՝ հեռագրեր:

Բախտավոր, կուլտուրական կյանք են վարում նատալին-
ցիները: Միայն ծերերն են հիշում այն անիծյալ ժամանակը,
յերբ գյուղում վոչ մի դրագետ չկար: Մինչև Հոկտեմբերյան
հեղափոխությունը գյուղացիները լրագրերի և ժուռանալների մա-
սին նույնիսկ գաղափար չունեցին:

Խորհրդային իշխանության 22 տարիների ընթացքում շատ
բան ե կուխիկի նատալինոյում: Հարյուրավոր կոլտնտեսական-
ներ և կոլտնտեսութիներ սովորում են գանապան գարոցներում և
խմբակներում, 20-ից ավելին ստացել են բարձրագույն կրթու-
թյուն և աշխատում են վրագես բժիշկներ, ճարտարապետներ,
ուսուցիչներ: Կոլտնտեսականները գուրս են գրում ավելի քան
200 որինակ լրագրեր և 80 որինակ ժուռանալներ:

Առաջներում աշնան ուղեխափանքին, գյուղամիջյան անկա-
նոն ճանապարհներով, իսկ ձմեռը ձյունապատ փոսերով քարշ
ելին գալիս փոստային տրոյկաները: Հարյուր եր մի ամբողջ
որ ու գիշեր, վորպեսզի փոստը հասցվեր 60—80 կիլոմետր տա-
րածության վրա: Այժմ շատ տեղերում փոստային ավտոմեքե-
նան և մոտոցիկլետն այդ տարածությունն անցնում են 2—3 ժա-
մում:



Փոստատար ավտոմեքենա

1938 թվականին ավտոուղիների ընդհանուր տարածությունը
չասավ 172 հազար կիլոմետրի:

Նախահեղափոխական Ռուսաստանում ողային տրանսպորտ
բոլորովին չկար, իսկ հիմա մեր ամբողջ յերկիրը պատել են
փոստային բազմաթիվ ավելողներ: 1938 թ. փոստային ինքնա-
թիւնները փոխադրեցին 9 հազար տոննից ավելի բեռներ, լրա-
գեր, ծանրոցներ, նամակներ: Ավելացնալով ուղարկված նա-
մակը, որինակ Մոսկվայից Տաշքենդ հասցեյատիրոջը հանձնվում
է յերկրորդ որվա վերջին: Նույն նամակը յերկաթուղով հաս-
ցեյատիրոջը կհասցվի հինգերորդ որը:

Փոստի փոխադրման համար մեր արդյունաբերությունը կա-
ռուցել ե զանազան վերերկրային, գետային ու ծովային ուրիշ
արագաշարժ մեքենաներ՝ աերոսահնակներ, սահմակույկներ,
գետային և ծովային կատերներ: Առաջներում տրանսպորտի այդ
տեսակը բոլորովին գոյություն չուներ:

1938 թ. փոստն ընդունել և հանձնել ե մոտ 8 միլիարդ զա-



Փոստատար ողանակ

նաղան տեսակի առաքումներ: Այդ 40 անդամ ավելի յէ, քան
մինչհեղափոխական Ռուսաստանի փոստային առաքումները 1913
թվականի ընթացքում:


1913 թվականին հեռագրային և հեռախոսային լարերի ընդ-

Հանուր յերկարությունը Թուսաստանում կազմում էր ընդամենը 500 հազար կիլոմետր:

1938 թվականին լրաբերի յերկարությունը հավասար էր 2 միլիոն 400 հազար կիլոմետրի; դրա հետ մեասին կախված են շատ բրոնզե և բիմետաղյա լարեր:

Այս ըրդային իշխանության տարիներին գյուղական վայրերում համարյա նոր և հեռախոսացանց անցկացված: 1938 թ. վերջին Միության դյուղերում կար մոտ 9 հազար մԵ սիստեմի հեռախոսային կայան և ավելի քան 102 հազար հեռախոսային ապարատ: Հեռախոսադերի ընդհանուր յերկարությունն անցնում էր 335 հազար կիլոմետրից: Այդ ժամանակ հեռախոսացման էր յենթարկված գյուղխորհուրդների 77 տոկոսը և ՄՏԿայանների մոտ 84 տոկոսը:

Յերրորդ հնդամյակում գյուղխորհուրդների, ՄՏԿ և խորհունտեսությունների հեռախոսացումը լիովին կավարուի:



Փռտային աերոսահեակ

Մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական ՄԷծ հեղափոխությունը յերկրի միջքաղաքային հեռադրա-հեռախոսային կապը շատ անհան էր: Ստալինյան հնդամյակների տարիներին հեռադրական կապ ստացան քաղաքների և շրջանային կենտրոնների 96 տոկոսից ավելին, իսկ հեռախոսային կազմ՝ 89 տոկոսը:

Հեռախոսով Մոսկվայից կարելի յե խոսել այնպիսի հեռավոր քաղաքների հետ, ինչպիսին են Թբիլիսին, Արխանգելսկը, Մուրմանսկը, Նովոսիբիրսկը, Կրասնոյարսկը: 1939 թ. մեր յերկիրն ստացավ նոր, աշխարհում ամենամեծ հեռադրա-հեռախոսային մագիստրալ գիծը Մոսկվա-Խարարովսկ:

Կրեմլի մեծ պատերից մինչև լայնատարած Ամուրի ափերը

ձգվեցին նոր մագիստրալի գծեր: Հազարավոր կիլոմետրերով կարել և ողային գծեր անցան գետերը, լճերը, անանցանելի տայգաները: Շատ կառուցումներ բարձրացան մեծ քաղաքներում, Ուրալի ապառաժներում, Սիրիրի տայգաներում, Հեռավոր Արևելքի սրբնթաց գետերի ափերին: Կապի տեխնիկայում յեղած լավագույն նորություններն ոգտագործված են բազմաթիվ ուժեղացուցիչ կայաններում և ապարատանոցներում:

Աշխարհի այլ մեծագույն հեռագրա-հեռախոսային մագիստրալի շինարարության պատմությունը իրենից ներկայացնում է խորհրդային կապավորների հերոսության ու համառ պայքարի, իսկական աշխատանքային ենտուզիազմի հուզիչ եջեր:

Հին Ռուսաստանը կապի կարիքների համար ապարատուրան ներմուծում էր արտասահմանից: Շվեյցարիայում գնվում եյին հեռախոսային, Անգլիայում և Ֆրանսիայում հեռագրային ապարատների մենաշնորհ արտադրությունը երկառնի շվեյցական ֆիրման էր: Այժմ խորհրդային արդյունաբերությունն ամբողջ սարքավորումն արտադրում է իր գործարաններում, իր սեփական խորհրդային նյութերից: Մեզ մոտ պատրաստվում են արագ գործող նորագույն հեռագրային և ռադիո-հեռագրային ապարատներ:

Մեր կոնստրուկտորներն ու գյուտարարները հաջողությամբ աշխատում են ապարատների լավագույն տեսակներ ստեղծելու վրա: Կուսակցությունը և կառավարությունն ոգնում են նրանց և բոլոր պարմանները ստեղծում են ստեղծագործական աշխատանքի համար:

Նախահեղափոխական Ռուսաստանը ռադիոհեռախոսային կայաններ չուներ: Զնչին էր ռադիո-հեռագրային հաղորդիչների ցանցը:

Շատ մեծ նշանակություն էր տալիս ռադիոկապին Վլադիմիր Իլյիչ Լենինը: Նա շատ լայնորեն ոգտագործում էր անլար կապի հեռարավորություններն ինչպես հոկտեմբերյան ապստամբության որերին, այնպես ել հետագայում:

Ռադիոյի միջոցով ամբողջ աշխարհին հաղորդվեց կատարված հեղափոխության մասին: Ռադիոյով հրաման տրվեց բանակին ցարական բանակի նախկին զյուսպոր հրամանատարին փոխելու մասին և կոչ տրվեց զինվորներին վերջ տալու պատերազմին:

Լենինի նախաձեռնությամբ ստեղծվեց Նիժնի-Նովգորոդի լա-

բորատորիան—խորհրդային հանրապետության առաջին դիտահետազոտական Հիմնարկությունը, վորը մեծ դեր խաղաց խորհրդային ռազիոնալիստիկայի զարգացման գործում։ Լենինն անձամբ հսկում էր Նիժնի-Նովգորոդի ռազիոնալաբորատորիայի աշխատանքներին։ 1920 թ. փետրվարի 5-ի նամակում ռազիոնանապետներին Վլադիմիր Իլիչը դրել էր։

«... Թերթը, վոր ստեղծում եք դուք առանց թղթի և առանց տարածության», մեծ գործ է լինելու։ Ամեն տեսակի և համակողմանի ոժանդակություն եմ խոստանում Զեզ այդ և նման աշխատանքների համար։

Եռյն թվին Լենինի կողմից ստորագրված Աշխատանքի և Պաշտպանության Խորհրդի հասուկ գեկրետով Նիժնի-Նովգորոդի լաբորատորիային հանձնարարվում է կառուցել Մոսկվայի ռազիոնալախոսային կայանը։ Դա առաջին հեռախոսային կայանն է Յեվրոպայում։

1922 թ. Մոսկվայի «Կոմինտերնի» անվան ռազիոնալայինը հաղորդում է Յեվրոպայում առաջին ռազիոնալայինը։

Խորհրդային Միությունը ռազիոնալորդման ցանցի քանակով և հզորությամբ առաջին տեղն է բանում Յեվրոպայում և յերկրորդը՝ աշխարհում։

Ռազիոնալապետական հաղորդեների ոգնությամբ հաջողվում է կտրել հսկայական տարածություններ։ Միութենական բոլոր 16 հանրապետությունների մայրաքաղաքները յերկրի կենտրոնի, Մոսկվայի հետ կապված են ռազիոնով և լարերով։ Մոսկվայից ամենորյա ուղիղ կանոնավոր կապ է գործում Խաբարովսկի, Իրքարկայի և յեռուային կայանների հետ։

Խորհուրդների Յերկրում հանդես յեկան կապի նոր տեսակներ՝ բիլդենապետ (կամ Ֆոտոհեռագիր) և պատկերահաղորդում (պատկերների հաղորդումը տարածության վրա ռազիոնով կամ լարերով)։ Խորհրդային յերիտասարդ պատկերահաղորդման տեխնիկական բազան լրացվում է նոր կառուցումներով—Մոսկվայում և Լենինգրադում ավարտված և բարձրորակ պատկերահաղորդման կենտրոնների կառուցումը։

ԿԱՊԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Մեծ և կատար նշանակությունը Խորհրդային Միության մեջ իր անձայիրածիր տարածություններով, իր մեծաքանակ գործարաններով ու Փարբիկաներով, իր մեքենայացված, աշխարհի ամենախոշոր գյուղատնտեսությամբ և իր բնակչության քաղաքական ու հասարակական հսկայական ակտիվությամբ։

Փոստը, հեռագրատունը, ռազիոն, այդ բոլորը հանդիսանում են կապի այն միջայները, վորոնց շնորհիվ կուսակցության ու կառավարության միջոցառումներն անմիջապես գալուում են բոլոր աշխատավորների սեփականությունը, կազմակերպելով և ուղղություն տալով նըանց աշխատանքներն։

Վերցնենք գյուղատնտեսությունը։ Կարո՞ղ են արդյոք յերկրամասային կամ մարզային կազմակերպությունները պայքարել պլանների կատարման համար, յեթե նրանք չիմանան, թե ինչ է կատարվում խորհտնակառություններում, կոլտնտեսություններում և մեքենատրակտորային կայաններում, յեթե չտարածեն առաջավորների փորձը։ Կա՞ն արդյոք մեքենատրակտորային կայաններում պահեստի մասեր, բավակա՞ն և արդյոք վառելանյութը, սերմերի վո՞ր սորտն և պակաս և վորն ավելի, ո՞մ ոկտագոնների վարչությունը հարցերի պատասխանը տալիս է լավ կարգավորված կապը՝ զուգակցված, իհարկե, անձո՞ր գարկայիւն տեղերի հետ։

Կարո՞ղ է արդյոք, միքանի տասնյակ կոլտնտեսություններ սպասարկով մեքենատրակտորային կայանի դիրեկտորը հաջողությամբ զեկավարել աշխատանքները, առանց ամեն որ, ամեն ժամ կապվելու արակտորային բրիգադների, կոլտնտեսությունների և գյուղինորդների հետ։ Իհարկե վո՞չ։



Փռստը դաշտ, աշխատանքի վայրը հասցնելը

Բավական ե ցանքի կամ բերքահավաքի կամ պանիայի յեռուն ժամանակ միայն մի որ անցկացնել վորեւ մեքենատրակտորային կայանում, կամ վորեւ չըջնողաժնում՝ հասկանալու համար, թե ինչպիսի հսկայական և հաճախ վճռական գեր և խաղում լավ գործող կազը կոլեկտիվ տնտեսության մեջ:

Հսկայական նշանակություն ունի կազը նաև արդյունաբերական ձեռնարկությունների համար:

Յուրաքանչյուր գործարան ամենասերտ կերպով կապված է տանիքակ ուրիշ՝ մատակարարող գործարանների հետ, կապված է տրանսպորտի, հումքի պահեստների, հարյուրավոր հիմնարկների և ձեռնարկությունների հետ: Հեռագիրը, հեռախոսը, փոստը, ռադիոն կոչված են յուրաքանչյուր ժամ ոգնելու արտադրությանը. և գործարանին հասցեյագրված հեռագրի կամ բեռնագրի կորուստը կամ հապաղումը վնաս է հասցնում արտադրությանը, իսկ այդ նշանակում է նաև մեր հայրենիքին:

Առանց կազի կանոնավոր կազմակերպման չեն կարող աշխատել ավիացիոն և յերկաթուղարյին ու ջրային տրանսպորտը:

Ինքնաթիռները չեյին թռչի հերթական ույրի, յեթե ռադիոյով, կամ հեռագրով չհաղորդեյին ողաչուններին, թե ինչպիսի յեղանակ և սպասում նրանց ըստ իրենց մարշրուտի և ինչ գրության մեջ ե տըստատն:

Գնացքի մեքենավարը չի կարող գնացքը վարել, յեթե նրան հայտնի չե, թե ինչ և սպասում նրան, արդյոք կայարանամիջում չի՞ մնացել նախընթաց գնացքը, կանոնավոր ե արդյոք ուղին, պատրաստ և հերթական կայարանը գնացքն ընդունելու համար: Առետրական նավերը ռադիոյով հաղորդում են իրենց ռեյսերի մասին, վտանգի յենթարկված ծովային նավերը՝ իրենց գտնված ձիչտ տեղը:

Բացառիկ չափով մեծ է կազի նշանակությունը յերկրի պաշտպանության գործում: Ռազմական գործողությունների ժամանակ ամենից առաջ աշխատում են խանդարել հակառակորդի կազն իր գորամասերի միջև, գրավել հեռագրատունը, հեռախոսը, ռադիոկայանները կամ քանդել գրանք:

1917 թվականին, յերր Վլադիմիր Լենինը մշակում եր գինված ապստամբության իր հաճարեղ պլանը, գրում եր.

«Իսկ վորագեսպի ապստամբությանը վերաբերվենք մարքսիստուն, այսինքն՝ վորագես արվեստի, մենք միենույն ժամանակ, վոչ մի բոլոր չկորցնելով, պետք ե կազմակերպենք ապստամբական ջոկատների շտաբ, բաշխենք ուժերը, շարժենք հավատարիմ զնդերը զեպի ամենակարևոր կետերը, շրջապատենք Ալեքսանդրինկան¹, գրավենք Պետրոպավլովկան², ձերբակալենք գլխավոր շտաբն ու կառավարությունը, յունկերների և վայրենի դեվիզիայի դեմ ուղարկենք այնպիսի ջոկատներ, վորոնք ընդունակ են մեւնել, բայց թույլ չտալ թշնամուն, վոր շարժվի դեպի քաղաքի կենտրոնները:

Մենք պետք ե մորիլիզացիայի յենթարկենք զինված բանվորներին, կանչենք նրանց վերջին մոլեգին մարտի, մեկն գրավենք հեռագիրն ու հեռախոսը, տեղավորենք ապստամբության մեր շտաբը կենտրոնական հեռախոսակայանի մոտ, նրա հետ հեռախոսով կապենք բոլոր գործարանները, բոլոր զնդերը, զինված պայքարի բոլոր կետերը և այլն» (նամակ ՌՍԴԲԿ կենտրոնական կոմիտեյին 1917 թ. սեպտեմբերի 26—27-ին, Լենին, Յերկերի ժողովածու, հ. XXI, էջ 199):


¹ Ալեքսանդրինկա—Ալեքսանդրյան թատրոնը Պետերբուրգում, ուր տեղի ունենում գեմոկրատական խորհրդակցության նիստերը:

² Պետրոպավլովկա—Պետրոպավլովյան բերդը Նևայի վրա Պետրոպավլովյան ձմեռային պալատի դիմաց, ցարիզմի ժամանակ ծառայում եր վորագես քաղաքական կալանավորների բանա:

Բնկեր Ստալինը, վոր Լենինի հետ միասին զեկավարում եր Պիտերի բանվորների գինած ապստամբությունը, փայլուն կերպով իրագործեց լենինյան պլանը:

1917թ. նոյեմբերի 6-ի յերեկոյան ժամը 5-ին Ռազմահեղա-
վուսական կոմիտեից ցուցումով գրավվեց Հեռագրատունը, իսկ
յերեկոյան ժամը 9-ին Հեղափոխական նախատիմերի ջոկատն
արդեն գրավվեց Պետերբուրգի Հեռագրագալան գործակալության
շենքը:

Նոյեմբերի 7-ին, գիշերվա ժամը 1-ի անց 25 լուսիցին զբավելուում և փոստատունը, խակ առավելույան ժամը 7-ին՝ հեռախոսակայանը։ Այդ նույն օրն առավելույան Ռազմա-հեղափոխական կոմիտեի գուցումով զբավելում են կառավարական բոլոր ուղիղ




Պետրովանի «Նոր Հոլանդիա» սադիոկայանը

ଲୁକ୍କେରୁନ୍କେ ଲେନନ୍ଦିର ଓ ପାତାଫିଲ୍ ରୁ 1917 ମୁଁ ଶୁଣିଏମର୍ବେଗାନ୍ ଶୈଳାବ୍ଳିକାନ୍ତିର୍ବ୍ୟାନ୍
ପରିବହିତ ଆପଣିବ୍ୟାଙ୍ଗିକାନ୍ତିର୍ବ୍ୟାନ୍ ଅନ୍ତର୍ଭାବର୍ଥିତ କାନ୍ଦାନ୍ତିର୍ବ୍ୟାନ୍ କାନ୍ଦାନ୍ତିର୍ବ୍ୟାନ୍ ଅନ୍ତର୍ଭାବର୍ଥିତ
ଆପଣିବ୍ୟାଙ୍ଗିକାନ୍ତିର୍ବ୍ୟାନ୍ ଅନ୍ତର୍ଭାବର୍ଥିତ କାନ୍ଦାନ୍ତିର୍ବ୍ୟାନ୍ କାନ୍ଦାନ୍ତିର୍ବ୍ୟାନ୍ ଅନ୍ତର୍ଭାବର୍ଥିତ
ଆପଣିବ୍ୟାଙ୍ଗିକାନ୍ତିର୍ବ୍ୟାନ୍ ଅନ୍ତର୍ଭାବର୍ଥିତ କାନ୍ଦାନ୍ତିର୍ବ୍ୟାନ୍ କାନ୍ଦାନ୍ତିର୍ବ୍ୟାନ୍ ଅନ୍ତର୍ଭାବର୍ଥିତ
ଆମାର :

զծերը Մոռկվայի, Կիւի, Ռեւելի միջև, իսկ ցերեկվա ժամը
12-ին հեղափոխական նավաստիների մի ջոկատ գրավում և ռազ-
մական նավահաճանգիստը ռազիոնկայանի հետ միասին:

Կապի միջոցները՝ փստալ, հեռագիրը, հեռախոսը և ռադիոն Բայմա-հեղափոխական Կոմիտեին ողնեցին ազահովելու ապրա-տանըության հաջողությունը:

Ժողովրդի ամենավկանելիմ թշնամիներն անցյալում գործելով կապի ձեռնարկություններում, լավ ելին հասկանում, թե ինչպիսի հսկայական նշանակություն ունի. կապը մեր յերկրի պաշտպանության գործում։ Նրանք քիչ ջանքեր չուղարկեցին կապի անտեսությունը քայլայելու համար։ Նրանք վնասարարական կերպով ելին կառուցում վտառտատները, հեռազբատները, կապի չնքերը, ռազիոկայանները, ցրում ելին առանձին որյականների շինարարության համար պետության տված միջոցներն ու նյութերը, արհեստականորեն կաղըերի հոնունության պայմաններ ելին ստեղծում, քայլայում ելին աշխատանքային կարգավհանությունը և այլն։



Փռստի քեռնումը փռստային վագոնի

Միջոցների և նյութերի ցրումը վնասաբարության հիմնական տեսակներից մեկն եր: Ժողովրդի թշնամիներն այնպես ելին ձեացնում, թե իրը իրենք մեծ շինարարություն էն կատարում, իսկ գործնականում նրանք դրամները ցրում ելին հարյուրափոք

որյեկտների վրա: Շինարարությունները մնում եյին անալարտ և թերակառուցված: Շենքը կառուցվում եր մի քաղաքում, իսկ սարքավորումն ուղարկվում եր մի այլ քաղաք, վորտեղ դեռ միայն շենքի հիմքն եր դրվում: Հեռագրահեռախոսային գծերի շինարարության համար սյուներ եյին տնկվում, իսկ լարեր բաց չեյին թողնում: Այն վայրերը, վորտեղ լարի կարիք կար, ուղարկում եյին մեկուսիչներ, և ընդհակառակը՝ վորտեղ մեկուսիչներ եյին հարկավոր, լարեր եյին ուղարկում:

Գծերի ընթացիկ նորոգման համար մեծ գումարներ եյին ծախսվում, բայց նորոգումները կատարվում եյին այնպես, վոր ձևականորեն կատարված եյին համարվում, իսկ աշխատանքի մեջ վոչ մի բարելավում չեր ստացվում:

Փոստային ձեռնարկությունների ցանցի դասավորումը նույնապես վնասարար ձեռվ եր կատարվում: Կապի բաժանմունքները բացվում եյին սակավաբնակ գյուղերում, իսկ քաղաքներում, քաղաքների ծայրամասերում, բանվորական ավաններում և աղուային շրջաններում, խոշոր խորհանություններում և ՄՏ կայաններում կապի ձեռնարկությունների աճը դիտավորյալ կերպով ձգձգվում եր: Քաղաքներում, բանվորական ավաններում և խոշոր գյուղերում բացվում եյին կապի անբավարար ձեռնարկություններ:

Կապի հազարավոր բաժանմունքներ և գործակալություններ իրավունք չունեյին ընդունելու և հանձնելու ծանրոցներ, դրամական փոխադրություններ, գնահատված նամակներ:

Վնասարարական գործունեյության վերաբերյալ կարելի յե բերել ուրիշ շատ որինակներ: Դավաճաններն աշխատում եյին այլասերել անկայուն մարդկանց: Ինքնաքննադատությունը խեղդված եր: Տարածվում եյին ցեխովչչինա ու փոխադարձ յերաշխավորությունը: Աշխատավորներին սովորեցնում եյին, վոր «աղը տնից դուրս չի հանվի»: Յերիտասարդ կադրերն առաջ չեյին քաշվում, և նրանց աճեցման ու ոդնության մասին վոչ վոք չեր հոգում:

Կապի հիմնարկներում և ձեռնարկություններում պատվաստում եյին վոչ-խորհրդագային, անհոգի վերաբերմունք աշխատավորության, բանվորների, ծառայողների և կորտնտեսականների նկատմամբ: Վնասարարներն աշխատում եյին դրանով դժոհություն առաջացնել բնակչության մեջ: Նրանք անում եյին այն ամենը, ինչ հնարավոր եր, վորպեսզի վատացնեն կապի աշխա-

տանքը և դրանով իսկ կազմալուծեն արտադրության ու գյուղատնտեսական՝ ձեռնարկությունների աշխատանքը, վիժեցնեն մեր մեծ հայրենիքի պաշտպանունակությունը:

Այժմ յուրաքանչյուր կապավորի աշխատանքի մեջ դԱսավորն այն ե, վոր արագորեն վերացվեն վնասարարության բոլոր հետեւանքները և կապի տնտեսության մեջ բոլչեկլյան կարգ ու կանոն մացվի:

Պետք ե հիշել, վոր կապի յուրաքանչյուր աշխատող հանդիսանում և սոցիալիստական շինարարության անմիջական մասնակիցը և նրան վստահել են պատասխանատու ճակատամաս՝ կապը: Նրա աշխատանքից ե կախված սոցիալիստական շինարարության բազմաթիվ բնագավառների հաջողությունը: Զգալի չափով նրա աշխատանքից ե կախված մեր յերկրի պաշտպանունակության ուժեղացումը:

ՍԵՐԵՆՔ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ԱՐԺԱՆԻ ԿԱՊ

Մեր սոցիալիստական հայրենիքի պատմության մեջ 1939 թիվը կմտնի վորպես նշանակալից, մեծ տարի։ Դա աշխատավորոների գեղուտատաների տեղական խորհուրդների ընտրությունների տարին եր, վորոնք Ստալինյան մեծ Սահմանադրության հիման վրա ավարտեցին խորհրդային մարմինների գեմոկրատացումը։ Դա էւճաստանի պաների լծից մեր արյունակից յեղբայրների՝ ուկրաինացիների և բելոռուսների ազատազրման տարին եր, դա Արևմտյան Ռւկրաինայի և Վրեմտյան Բելոռուսիայի՝ ԽՍՀՄ-ի հետ վերամիացման տարին եր։ Դա յերբորդ հնդամյակի 2-րդ տարին եր. և համաժողովրդական ստախանովյան մեծ չարժման հիմքերորդ տարին։

1940 թվականի սկիզբը մեր յերկրում հավերժացլած և արտադրական նոր հաղթանակներով, սոցմրցման նոր վերելքով։ Ամբողջ յերկիրը ձգուում ե, վոր ստալինյան Յ-րդ հնդամյակի յերրորդ տարում չվիճեն ժողովրդական տնտեսության հետ մնացող ճյուղեր։

Այդպիսի հետ մնացող ճյուղ իր մի շարք ողակներում հանդիսանում է կապը, չնայած վոր շատ կապավորներ լավ են աշխատում։

Վերցնենք թեկուզ կոնտրու ժամկետները։ Փոստը չի կարող աշխատել անխափան և ճշտորեն, ինչպես նրանից պահանջվում է, յեթե խստորեն չպահպանի զրաքը ության առաքման և հանձնման կոնտրու ժամկետները։ Կոնտրու ժամկետը, դա յերկաթյա, անխախտ որենք պիտի լինի։ Սակայն շատ դեպքերում այդ ժամկետները չեն կատարվում։ Դեռ ալելին՝ վիճուպում են ամեն տեսակի այսպիս կոչված որյեկտիվ պատճառներ կոնտրու ժամկետների խախտումներն արդարացնելու համար։

Յավոք սրտի կան և այնպիսի կապալորներ, վորոնք ձըդտում են ապացուցել, վոր «բավարար» աշխատանքը—դա սահմանն ե, վորից այն կողմը կապը չի կարող անցնել։

ԽՍՀՄ Գերազույն Խորհրդի, Միութենական, Ավտոնոմ հանրապետությունների Գերազույն Խորհրդագների և աշխատավորոների գեղուտատաների տեղական խորհրդագների ընտրությունների ժամանակ կապի լավագույն մարդիկ, այդ թվում նաև գյուղական կապավորները իրենց փորձով ցույց տվին, վոր յուրաքանչյուր կապավոր կարող ե և պարտավոր և աշխատել գերազանց, առանց ամենափոքր թերության, առանց այսպես կոչված խոտանի, վոր գրագրության առաքման և հանձնման կոնտրու ժամկետները կարելի յե վոչ միայն կատարել առանց վորեւ խախտման, այլև զգալիորեն կընատել դրանք և այլն։

Ընտրական կամպանիան փոստով, հեռագրով, հեռախոսով և ուղիոյով որինակելի կերպով սպասարկելու համար կապավորները շատ ուժ և միջոցներ մորթիվացեայի յենթարկեցին։

Ընտրական կամպանիայի որերին կապավորներն իրենց միջից արամագրեցին հազարավոր աղիտատորներ, ոլրոպագանդիստներ, զրուցարարներ։ Նրանք անգաղաք մասսաների մեջ եյին տանում բոլեկիկյան խոռոքը, Ստալինյան Սահմանադրության յուրաքանչյուր հոգվածի պրոպագանդ եյին անում, պարզաբանում եյին Ընտրությունների կանոնադրությունը, աղիտացիա եյին մզում կոմունիստների ու անկուսակցականների բլոկի կողմից առաջարկված դեպուտատության թեկնածուների ոգախն։

Կապավորներն ընտրություններն սպասարկելու գործում իրենց կատարած աշխատանքով խկապես բոլեկիկորեն ապացուցեցին, վոր նրանք ցանկանում են և կարողանում են գերազանցորեն աշխատել։

Սակայն ընտրական կամպանիայի ժամանակ նկատված կապի աշխատանքի վերելքը վոչ ամեն տեղ եր ամրացված։ Ընտրությունների վերջանալուց հետո վորոշ շրջաններ, մարզեր և յերկրամասեր սկսեցին վատ աշխատել։ Պայքարն որինակելի աշխատանքի համար, վերահսկողությունը զրաքը ությանը իր ժամանակին ուղարկելու և բաժանմունքների, գործակալությունների ու նամակատարների աշխատանքի վորակի համար սկսեց թուլանալ։

Որինակ, շատ վատ սկսեցին աշխատել Ամուրի մարզի Սվորդնենսկի շրջանի կապավորները։ Այդ մասին ըրջգործկոմի նա-

խագուհի սեղակալ ընկեր Մակարովը «Социалистическая связь» լրագրին ուղղված հոդվածում հաղորդում է.

«Հենց վոր խոսքը վերաբերում է Ամուրի մարզի Սվորոցնենսկի կապի գրասենյակի աշխատանքների գնահատմանը, իսկույն հշում են, վոր կապավորները լավ սպասարկեցին ԽՍՀՄ և ՌԽՖՍՀ Գերագույն Խորհուրդների ընտրությունները, լավ աշխատեցին կուսակցության ԽՎԻ համագումարի որերին: Իսկ ապակես, այդ որերին կապն աշխատում եր հստակ կերպով: Իսկ այդիմ:

Վերցնենք, որինակ, մամուլի հանձնումը դաշտում, դաշտակայաններին: Մեզ մոտ այդ հանձնումը գոյություն չունի: Յե՛վ հիմնարկային և՝ կոլխոզային փոստատարները կոլտնտեսական բաժանորդներին դաշտում լրագիր չեն տալիս: Լավագույն դեպքում փոստը դաշտակայաններն են ուղարկում պատահական մարդկանց միջոցով:

Փոստատանը (պետ ընկ. Սերգեյիվ) պատճառաբանում են, վոր կոլտնտեսային հողամասերը ցրված են: Դա ճիշտ է, բայց դա կապավորներից ավելի յի պահանջում ձկունություն, ժրություն, հմուտ կազմակերպում:

Լրագրերի վատ հանձնման համար աշխատավորների բազմաթիվ բողոքներ կան: Մի անգամ այդ մասին բողոքում ելին «Պրոլետարի» կոլտնտեսության կոլտնտեսականները: Յես ստուգեցի: Պարզվեց, վոր լրագրերը չեն հասցվում. փոստատար չկա: Մեր շրջանի գյուղական վայրերում աշխատում են 22 հիմնարկային և կոլտնտեսային փոստատարներ: Կապի գրասենյակը պետք ե հսկի, վորպեսզի կոլտնտեսությունները փոստատարներ առանձնացնեն, պետք ե ստուգի նրանց աշխատանքը: Սակայն գրասենյակում դրանով չեն զբաղվում: Յես ստիպված յեղա ինքս պայմանավորվելու, վոր «Պրոլետարի» կոլտնտեսության մեջ փոստատարներ առանձնացվեն:

Մի եյական պակասություն ել—փոստի դանդաղաշարժությունը: «Իզվեստնյակ» կոլտնտեսությունը գտնվում է չրջանի կենտրոնից 85 կիլոմետրի վրա: Բատ չվացուցակի փոստն այստեղ պետք ե հասնի յերրորդ որը: Վատ չվացուցակ ե: Ինչո՞ւ միայն յերրորդ որը պետք ե կոլտնտեսությունում շրջանային լրագրեր ստանան: Իսկ իրականում դրանից ել վատ ե: փոստն այնտեղ հասնում ե 5—6-րդ որը:

Ծրջանային փոստուղիներում փոստի շարժման վրա հսկողություն չկա: Յուրաքանչյուր կետում նամակները և լրագրերը մնում են ժամերով, յերբեմն որերով...

Վատ են ոգտագործվում փոստի տրամադրության տակ յեղած փոխադրական միջոցները: Կա 5 ավտոմեքենա, բայց աշխատում են միայն մեկ-յերկուսը: Բարբարոսաբար են շահագործվում մեքենաները. սկսած 1935 թվից վոչ մի անգամ չեն կերանորոգվել:

Մեր գյուղխորհուրդների և կոլտնտեսությունների մեծամասնությունը հեռախոսացման է յենթարկված: Ուրախալի յերկույթ է: Բայց միշտ չե, վոր հաջողվում է ոգտագործել հեռախոսային կապը: Վերջերս յես վեց որ մնացի կլիմառուցեվի մեքենատրակտորային կայանի սպասարկած կոլտնտեսություններում: Այդ միջոցին ինձ միայն յերկու անգամ հաջողվեց խոսել շրջանային կենտրոնի հետ: Յեվ ինչքա՞ն ժամանակ, համբերություն ծախսվեց դրա վրա: Կլիմառուցկում կա կոմուտատոր, բայց նա հեռախոսային շլֆա չունի, այլ միացած է շրջանային կենտրոնը կոստյուկովի կոմուտատորի հետ միացնող գծին: Այսպիսով, մեկ լարին միացված են տասնյակ ապարատներ:

Սվորոդնենսկի Մեքենատրակտորային կայանը գժվարությամբ և հեռախոսով կապվում կոլտնտեսությունների հետ, չնայած նրանք համարյա բոլորը հեռախոսացված են: Բարդագոն գյուղի կողմը կապը շատ հաճախ է խանգարվում, և խանգարումները տևում են 5—7 որ»:

Սվորոդնենսկի փոստի ղեկավարները շրջանի կապի գործը հասցըրել են համարյա լիակատար քայլքայման, և դա պատահել է միայն այն պատճառով, վոր այդ շրջանի կապավորների միջից դեռ վերջնականապես դուրս չեր մղված անհոգությունը, ընտանեկանությունը, փոխադրամ յերաշխակորությունը, վոր դեռ իսկական բոլեկիլյան քննադատություն չի յեղել:


Ծավալելով բոլեկիլյան ինքնաքննադատությունը, բոլոր թերությունների անողոք քննադատությունը, բարձրացնելով հեղափոխական զգոնությունը, դինվելով բոլեկիղմով, կապավորներն անշեղորեն և շտապ կլավացնեն իրենց աշխատանքը: Այդ բարեկավումը պետք ե լինի վոչ թե ժամանակավոր, վոչ թե կապի գորեկ առանձին տեսակի գծով, վոչ թե կամպանիայի ժամանակ: Բարեկավումը պետք ե լինի արմատական, ամուր,

Խորհրդային Միության ամբողջ տերիտորիայի վրա, կապի բու-
լոր ահասակների մեջ:

Խորհրդային յերկրի կառլը դարձնել լավագույնն ամբողջ
աշխարհում, ստալինյան մեծ դարաշրջանին արժանի կապ,—
ահա խորհրդային կապավորների խնդիրը:

ՎՈՐԱԿԸ ԳԼԽԱՎՈՐՆ Ե ԿԱՊԻ ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ

Աշխատանքի վորակի հարցը սոցիալիստական մրցության
մեջ վճռական հարց է: Վորակից ե կախված կապի մարմինների
ամբողջ աշխատանքի հաջողությունը: Կարելի յէ, որինակ, ամեն
որ հանձնել մեծ քանակությամբ նամակներ ու լրագրեր, բայց
յէթե դրանք հանձնված են ուշացումով, հանձնված չեն իսկական



Փոստի համանումը կողմանը սուբյեկտում

տիրոջը և այլն, ապա այդպիսի աշխատանքը չի կարելի լավ համարել:

Ճիշտ այդպես նամակատարը կարող է ընդգրկել լրացրերի շատ բաժանորդներ, բայց յեթե նա բաժանորդազըության փաստաթղթերն անփութ ձեւակերպի, իսկ լրացրային հանդույցի աշխատակիցը ճիշտ չձեւակերպի բաժանորդազըատուն ուղարկվող պատվերը, այն ժամանակ բաժանորդները կմնան առանց լրացրի: Յուրաքանչյուր քաղաքացի միայն այն ժամանակ կասի փոստը լավ է աշխատում, յերբ նամակներն ու լրացրերը նրան ժամանակին հանձնվեն, յերբ դրամական փոխազրությունը կամ ծանրոցը նրան տան լրիվ և անդինաս ու առանց ուշացման, յերբ իր գործակալության մեջ, կամ բաժանմունքում միշտ կարողան գնել նամականիշ, ծրար և այլն:

Մենք գիտենք որինակներ, յերբ կապի գրատենյակը կամ բաժանմունքը սրածենում է կոլտնտեսությունների համատարած հեռախոսայումով, բայց հեռախոսային խոսակցությունների լույսությունը չափազանց վատ է: Կոլտնտեսականները միայն այն ժամանակ հաջող կհամարեն հեռախոսացման աշխատանքները, յերբ հեռախոսների լույսությունը լավ կլինի:

Կապավորի աշխատանքի վորակական հիմնական ցուցանիշներից մեկն են հանդիսանում փոստի դասավորման, փոխադրման և հանձնման կոնտրոլ ժամկետները: Կոնտրոլ ժամկետները մշակվում են այն հաշվով, վոր լրացրերը, նամակները, ծանրոցները վորքան հնարավոր են արագ հանձնվեն հասցեատերերին: Յեկ բական է մի տեղում խախտվեն կոնտրոլ ժամկետները, վորպեսզի այդ ամբողջ հաշվումները խախտվեն: Իսկ թե ինչի յեւ հանդում այդ, յերեսում ե թեկուզ հետեւյալ որինակից: Հեռավոր արեւելքից սահմանապահը պատրաստվում եր արձակուրդ գնալ իրենց կոլտնտեսությունը, վոր գտնվում ե յերկաթզծից 30 կիլոմետր հեռավորության վրա: Այդ սահմանապահը նախորդք նամակ եր գրել իր տունը, վոր վորոշված որը սայլ ուղարկեն կայարան:

Ճանապարհի ամբողջ տարածության վրա նամակը ժամկետի համաձայն գնում եր առանց վորեե հապաղման, և սահմանապահի ժամանելուց մի որ առաջ, ինչպես և յենթաղբում եր նա, հասավ կապի այն բաժանմունքը, վոր սպասարկում ե նրանց կոլտնտեսությանը: Բայց այդ կոլտնտեսության նամակատարը ծուլանում է փոստը ցրել ամեն որ և սահմանապահի նամակը,

վոր ժամանակին տրվել եր նրան հանձնելու, հանձնում և միայն մյուս որը: Այդպիսով, կապավորի հանցանքով արձակուրդավոր սահմանապահն ստիպված է լինում վոտքով գնալ 30 կիլոմետր ճանապարհ:

1935 թ. հուլիսի 30-ին կրեմլում յերկաթուղայինների ընդունելության ժամանակ ընկեր Ստալինն ասաց.

«...արանսպորտը մի կոնվեյեր և, վորտեղ կարևոր ե յուրաքանչյուր աշխատողի, յուրաքանչյուր պատուակի աշխատանքը: Յերբ դուք, ընկեր յերկաթուղայիններ, հասկանաք այդ, յերբ դուք հաստատեք տրանսպորտի մեխանիզմի բոլոր մասերի, բոլոր աշխատողների կարգավորվածությունը, հենց այդ ել կլինի իսկական, բոլցելիկյան կարգապահություն»:

Ընկեր Ստալինի այս ցուցումները լիովին պետք է վերաբերն նաև կապավորներին: Կապը ևս մի տեսակ «կոնվեյեր» ե, այստեղ ել պարտադիր ե բոլոր մասերի ու բոլոր կապավորների աշխատանքի կարգավորվածությունը:

Մեխանիզմի վորեմ մասի, կամ այդ մասի մի պատուակի վատ, անբարեխիղն աշխատանքը խախտում է ամբողջ մեխանիզմի նորմալ աշխատանքը, արժեկուրկ և դարձնում կապավորների ամբողջ կոնվեյերի աշխատանքն ու ջանքերը: Որինակ, անուշադիր դանձապահը, կամ անհոգի հեռագրատարը կարող են գերոյի հավասարեցնել հեռադրչուհի-հազարականների ստախանովական աշխատանքը. առանց մի վայրկյան ուշացնելու հաղորդած հեռագիրը կարող է հասցեատիրոջը հանձնվել մեծ ուշացումով կամ նրան վորոնելով տարուրերվել: Նման որինակներ կարելի յեւ հայտարերել կապի ամեն մի ձեռնարկությունում:

Վոչ մի թերացում, անփութություն և անձտություն չեկարելի հանդուրժել կապի աշխատանքում: Հարկավոր և հիշել, վոր կապավորների անփութությունն ու թափթփվածությունը վոչ միայն անձնական նյութական վնաս կհասցնեն աշխատավորներին (ծանրոցների, դրամական փոխազրությունների կորուստ և այլն), այլև հաճախակի վնաս են պատճառում ժողովրդական անտեսությանը:

Յեղել և մի գեպք, յերբ փոստը մեծ ուշացումով է հասցըել նոր զպրոցի կառուցման նախահաշիվը, և ըրջանը կարող եր մնալ առանց զպրոցի, վորովհետեւ առանց նախահաշիվի բանկը չի Փինանսավորում շինարարությունը:


Զագուաղեռնոն իր բաժանմունքին հեռագիր և տվել 1369 տոնն ալյուր բառնալու մասին, իսկ Մոսկվայի հեռագրատունը հաղորդել է «ՅԵ տոնն»:

Պատահում են կապավորներ, վորոնք փոխանակ լրագրերը հանձնելու կոլտնտեսություններին, «թիու յեն զնում» իրենց մոտ, բաժանմունքում կամ գործակալությունում։ Այդ մարդիկ քաղաքական վնաս են հասցնում։

Չե՞ վոր մեր մամուլը կոլտնտեսային մասսաներին կազմակերպում ե պայքարելու բարձր բերքի համար, սովորեցնում ե, թե ինչպես պետք ե հասնել այլպիսի բերքի, քաղաքականապես դաստիարակում ե մասսաներին, բարձրացնում ե նրանց կուլտուրական մակարդակը։ Նշանակում ե՝ այն զործակալը, նամակատարը, վորու ուշացումով ե հանձնում լրագրերը և ժուռնալները, նա արգելակում ե մեր մամուլի քաղաքական կարեոր աշխատանքը։

Յուրաքանչյուր կապավոր պարտավոր և աշխատել աղնվուրեն, բարեխիղձ կերպով, ուշադիր և հստակորեն։

ԽՍՀՄ Սահմանադրության 130-րդ հոդվածում առված ե. «ԽՍՀՄ յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր, և պահպանել



Փոստային փակ սայլակ

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Սահմանադրությունը, կատարել որենքները, աշխատանքի կարգապահությունը պահպանել, աղնվորեն վերաբերվել դեպի հասարակական սպարագը, հարգել սոցիալիստական համակեցության կանոնները»։

Հստ իրենց աշխատանքի բնույթի կապավորներն ամեն որ չխում են միլիոնավոր աշխատավորների հետ։ Հասարակական պարտաքը պահպանչում ե կապավորներից, վոր նրանք բոլոր աշխատավորներին սպասարկեն լավորակ, ուշադիր և կուլտուրական կերպով։ Այն կապավորը, վորը չի հանձնել լրագրերը, սխալ ե տեսակավորել նամակը, աղավաղել ե հեռագիրը, խախտում է իր անմիջական սպարտականությունը, անբարեխղճորեն ե աշխատում, խախտում ե ԽՍՀՄ քաղաքացու հասարակական պարտականությունը։

Կազի աշխատողները պարտավոր են ճշգրիտ և անշեղորեն կատարել խորհրդային որենքները։ «ԽՍՀՄ յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր և պահպանել ու ամրացնել հանրային, սոցիալիստական սեփականությունը, վորպես խորհրդային կարգերի սրբազն և անձնումների հիմք»։

Այսպես ե զրված Ստալինյան Սահմանադրության 131-րդ հոդվածում։ Այս հոդվածի մասին յուրաքանչյուր կապավոր պետք ե հիշի ամեն որ, ամեն ժամ և աշքի լույսի պես պահպանի սոցիալիստական սեփականությունը։ Ամբողջ աշխատանքի ընթացքում կապավորից պահպանչում ե մեծաղույն զգոնություն, ճշտություն և բարեխղճություն։ Որինակ, ասենք՝ բաժանմունքի պետը կամ գործակալը չի փակում այն սրահնեսը, վորտեղ պահպան են ծանրոցները, չի ապահովում նրա սրահպանումը, կամ ծանրոցների փոխադրումը վստահում է անհուսալի մարդու։ Այդ կապավորն, ուրեմն, կորցրել ե զդունությունը։ Դրանից կարող ե ուղարկել ժուլիկը, սոցիալիստական սեփականության հափշտակիչը։ Բաժանմունքի մյուս պետը ծանրոցները պահում և աշալը օրեն, բայց անփույթ և սխալ ե ձեւակերպում դրամական փոխադրությունները։ Դրանից նույնպես կարող է ոդունքել ժուլիկը, այդպիսի փոխադրությունը կարելի յեւ հեշտությամբ կեղծել և խարդախորեն ստանալ զրամը։ Այն կապավորը, վոր խստիվ պահպանում և աշխատանքի կարգապահությունը, յերբեք թույլ չի տա այդպիսի անփութություն և թափթափածություն։

Կապի շատ գրասենյակներում, բաժանմունքներում ու գործակալություններում չկա պահանջվող կարգապահություն։ Դեռ կան դեպքեր, յերբ նամակատարները գուրս են գալիս նամակները ցրելու այն ժամանակ, յերբ նրանց խելքին կիչչի, գործակալն աշխատանքի ժամերին թողնում են գործակալությունը և գնում իր գործերի հետեւց, տրակտների վրա թույլ են տըրվում դեպքեր, յերբ փոստերը չեն փոխանակվում։ Իսկ փոստ չփոխանակելը նույնն է, ինչ վոր տրանսպորտային աղետը, և այն կապավորը, վորը չի փոխանակում փոստը, ամենածանր հանցանքն է կատարում։

Կապի մարմիններում աշխատանքային կարգապահության յուրաքանչյուր խախտողն անխուսափելիորեն վնաս և հացնում ժողովրդական տնտեսությանը, խախտում ե ազգարնակության սովորակումը կապի միջոցներով, վտանգ ե ստեղծում կապի մարմիններին վատահած սոցիալիստական սեփականության համար։

ԱՌԱՋԻՆ ՏԵՂՈՒՄ—ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ՄԱՐԴԸ

Մարդկանց նկատմամբ հոգատարությամբ և տոգորված ամբողջ Ստալինյան Սահմանադրությունը, սոցիալիստական պետության Հիմնական Որենքը։

Մարդկանց նկատմամբ զգայուն վերաբերմունքով, քաղաքացիների հոգատար և ուշադիր սպասարկումով համակված պետք ե լինի կապավորի ամբողջ աշխատանքը, այդ պետք ե դրվի նրա աշխատանքի հիմքում։

Սա պետք ե լավ հիշի ամեն մի կապավոր։ Ով չի յուրացրել այս հասարակ ճշմարտությունը, ընդունակ չե կատարելու սուցիալիստական կապի առաջ դրված խնդիրները։

Բերենք միքանի որինակներ։ Կոլտնտեսուհին փոստ ե բերել մի գնահատված ծանրոց, վորի շապիկը կարված ե տարբեր դույնի թելերով։ Բաժանմունքի պետը հրաժարվում ե ընդունելոց, ասելով, թե ըստ հրահանգի արգելվում ե տարբեր գույնի թելերով կարելը։ Նրա գործը չե, վոր մարդը միքանի կելումետք ճանապարհ ե անցել վոտքով թե սայլով և ծանրոցի ուղարկումը կարող ե ուշանալ մեկ-յերկու որ ևս։ Ինչպես տեսնում եք, նա վարվում ե ըստ հրահանգի։ Իսկ յեթե բաժանմունքի այդ պետը հիշեր, վոր կապը գոյություն ունի քաղաքացիների համար, և վոչ թե ընդհակառակը, յեթե նա զգայուն և ուշադիր կերպով վերաբերվեր գեպի քաղաքացիները, ինչպես հարկ ե կապավորին, ապա նա ուրիշ կերպ կվարվեր։ Նա կոլտնտեսուհին ուրիշ թել, ասեղ կառաջարկեր կամ ինքը կվարեր ծանրոցն ինչպես հարկն ե։ Կոլտնտեսուհին շատ չնորհակալ կլիներ փոստի այդպիսի պետից։

Մի այլ որինակ: Ուստումի մարդի շրջաններից մեկում մի կարմիր-բանակայինի մայրը, մի կիսագրագետ կին, չխմանալով վորդու ճիշտ հասցեն, դիմել է բաժանմունքի պետին, խնդրելով ողնել իրեն նամակը վորդուն ուղիղ հասցեյագրելու: Կարմիր-բանակայինի մորն ոգնելու փոխարեն բաժանմունքի պետը հայտարարել է, թե ինքը պարտավոր չե հասցեների վորոնումներ կատարել:

Այնպիսի մի հրահանդ, վորը պարտավորեցներ կապալորներին նման վորոնումներ կատարելու, իսկապես վոր չկա, բայց մի՞թե յուրաքանչյուր խորհրդային քաղաքացի, նամանավանդ կապավորը, պարտավոր չե ոգնության դալ այդպիսի դեպքում առանց վորեև հրահանդի:

Հարկավոր ե միայն զգայնություն ունենալ դեպի մարդիկ և պատասխանատվության դիտակցություն կատարած աշխատանքի համար: Իսկական խորհրդային կապալորը պետք է ամեն կերպ ոգնի քաղաքացիներին փոստից ոգտվելու գործում:

Հենց այդպես ել վարդում են այն կապալորները, վորոնց սիրու ցավում ե գործի համար և հասկանում են, վոր իրենց սիրու համար և համար կապալորը արագ, հըստակ և հարմար կապ:

Վրդովեցուցիչ դեպք ե տեղի ունեցել Խարկովի մարդիկ իդյումի կապի գրասենյակում:

Կրասնոկուտսկից հեռագրով իդյումում ստացվում ե ընկ. Սեմեյիկինի անվան դրամական փօխադրություն: Ընկ. Սեմեյիկինը յերեք որ շարունակ հեռագրատուն եր զնում դրամը ստանալու և ամեն որ ստանում եր մի պատասխան—«փոխադրություն չկա»: Վերադառնալով կրասնոկուտսկ և պարզելով, վոր դրամը փոխադրված է հեռագրով, նա հարցում է կատարում իդյում, թե ինչու փոխադրումը չի հանձնված: Իդյումի կապալորները պատասխանում են. «փոխադրությունը չի հանձնված, վորով հետև հասցեյատերը չի ներկայացել ստանալու»:

Դժբախտաբար կապը հիմնարկներում դեռևս քիչ չեն այնպիսի մարդիկ, վորոնք չինովնիկաբար են վերաբերվում իրենց գործին: Ի՞նչ է նշանակում «չինովնիկական վերաբերմունք»: Յարական Ռուսաստանում պետական չինովնիկն զրադվում եր թղթե գործադրաբությամբ և կուրորեն կատարում եր իր նման, բայց բարդ դիրք դրախտ չինովնիկի կարգադրությունները:

Կենդանի մարդիկ իրենց կարեքներով և հոգսերով նրանց չելին հետաքրքրում, դա նրանց գործը չեր:

Մեր յերկրում դեռ մնացել են մարդիկ, վորոնք չինովնիկաբար են վերաբերվում գործին: Վերցնենք թեկուղ բաժանմունքի այն պետին, վորը հրաժարվել եր կոլտնտեսուհուց ընդունել ծանրոցը:

Նա գործին չինովնիկաբար վերաբերվեց: Միթե վորեւ մեկն արգելում եր նրան ոգնելու ուղարկողին ու տրամադրելու նրան բոլոր հարմարությունները: Վոչ, ընդհակառակ՝ մեր բոլոր որենքները, ցուցումներն ու կարգադրություններն ուղղված են դեպի այն, վոր խորհրդային հիմնարկները զգայուն կերպով, ուշադրությամբ և խնամքով սպասարկեն քաղաքացիներին:

Քաղաքացիների ուշադիր սպասարկումը պետք ե դառնա կապավորների ամբողջ աշխատանքի հիմքը:

Գործին լավ վերաբերվելու որինակներ ևս շատ կան: Կոլտնտեսուհին բաժանմունքը բերեց մի հեռագիր, վորը հարկավոր եր շտապ հաղորդել, բայց հեռագիր հասցեն լրիվ ցույց չեր տրված:

Ցեթե բաժանմունքի պետը ձևականորեն մոտենաբ, կարող եր այդ հեռագիրը չընդունել: Սակայն նա իր պարտքը համարեց ոգնել կոլտնտեսուհուն, ինքը տեղեկացավ, պարզեց ճիշտ հացեն ու հեռագիրը հաղորդեց:

Ահա մի ուրիշ որինակ: Տեղական կապալորները սահատուիաներում գտնվող հիվանդ մարդկանց նկատմամբ հոգատարություն հայտաբերեցին. բայց փոստատարներից և դրամատարներից, վորոնք սպասարկում ելին տեղական սահատորիաները, կապի գրասենյակը առանձնացրեց ևս յերկու փոստային գործակալ հատկապես ծանր հիվանդներին սպասարկելու համար: Այդպիսի հիվանդների համար դժվար է փոխադրությունը հանձնել, նամականիշ գնել և այլն:

Հազնված մաքուր սպիտակ խալաթներ (դրանք տալիս ե սահատորիայի վարչությունը), գործակալներն անցնում են պատաները, և ընդունում հեռագրեր, փոխադրություններ, պատվիրված նամակներ, վաճառում են դրամանիշեր և այլն:

Իսկ ահա թե ինչպես ե աշխատում հեռախոսավարություններից մեկը: Նա անձնական նախաձեռնությամբ մացրել և այսպիսի կարգ: բաժանորդին նախորդ հայտնում ե, թե խոսակցության

Համար գծերը յերբ են ազատվելու, և ցուցակադրում եւ ցանկացողներին:

Քաղաքացիներին ուշադիր, կուլտուրական, նախազգուշական սպասարկման գեղեցիկ որինակներ են ցույց տալիս Դրիմի ԱԽՍՀ Կոկտեբելի կապի բաժանմունքի կապավորները:



Ծանրոցների ընդունումը

Կոկտեբելը դանում եւ Սև ծովի տիֆին: Ամառն այնուն են գալիս հաղարավոր հանգստացողներ: Այստեղ անց են կացվում տրադիցիոն պլաներային մրցությունները: Այստեղ են գալիս յերկը յերկելի մարդիկ, չքանչանակիրները: Այստեղ կարելի

լի պատահել զանազան մասնագիտության մարդկանց—զբողների, նավթագործների, ոգաչուների, հանքավորների, ակադեմիկոսների, բամբակագործների, կարմիր Բանակի հրամանատարների: Համարյա յուրաքանչյուր հանդստացող գործ եւ ունենում փոստի հետ: Փոստում նա հանդիպում է գդայուն, հոգատար և ուշադիր վերաբերմունքի: Այստեղ հարկ չի լինում հերթի կանգնել. կապավորներն այնքան հստակ ու սահուն են աշխատում, վոր հերթեր չեն լինում:

Հանգստացողների անվամբ ստացվում են հարյուրավոր նամակներ, փոխագործյուններ, հեռագրեր: Զի յեղել վոչ մի դեպք, վոր առաքումն ուշացիի կամ ժամանակին չհանձնվի: Յեվ պատահական չե, վո՞ր հանգստացողներից յուրաքանչյուրը մեկնելու ժամանակ չի կարող գոհ չմնալ և չնորհակալություն չհայտնել Կոկտեբելի կապավորներին որինակելի, ուշադիր և կուլտուրական սպասարկման համար: Կոկտեբելի փոստի բաժանմունքի բողոքների գիրքը լցված է վոչ թե բողոքներով, այլ կապավորների աշխատանքի մասին տասնյակ գովասանքներով:

Ահա թե ինչ եւ գրում ժուկովսկու ամոլսն Ռազմա-ողային ակադեմիայի ուսանող ավագ լեյտենանտը. «Փոստը լավ եւ աշխատում: Բացառիկ քաղաքավարի և բարեհամբույր վերաբերմունք առանց բացառության բոլոր աշխատողներից, վորին վոր դիմել եմ»:

Դնելուպկետրովսկի «Կոմինտերն» դործարանի բանվորը նըշում եւ «Կոկտեբելում յեղած ժամանակամիջոցում յես չեյի կարող չնշել փոստի կոլեկտիվի ամենասուրավալիր և կուլտուրական վերաբերմունքը դեպի հաճախորդները»:

Այստեղից մեկնելով՝ յես ցանկանում եմ հայտնել յերախտապարտություն և չնորհակալություն»:

«Լենինը Հոկտեմբերին» հոչակավոր կինոնկարի սցենարիայի հեղինակ Ա. Կապելերը այսպես եւ արտահայտվում Կոկտեբելի փոստի աշխատանքի մասին. «Պետք ե նշեմ Կոկտեբելի փոստի բաժանմունքի բացառիկ հստակ աշխատանքը: Մեծ քանակությամբ հուսագրեր և նամակներ ստանալուս ժամանակ չի յեղել ուշացման վոչ մի դեպք: Բաժանմունքի աշխատողները բացառապես քաղաքավարի յեն և սիրալիր: Բաժանմունքի պետին և ամբողջ կոլեկտիվին հայտնում եմ անկեղծ չնորհակալություն»:

Թուչով մողելների համամիութենական յերկրորդ մրցությունների շտաբի քարտուղարը նշում ե.

«Ճնորհակալություն եմ հայտնում փոստի պետ ընկերը

Բուրգունենկոյին, նաև բոլոր աշխատողներին, վորոնք մշտապես մեծ ճշտապահությամբ ամեն ժամանակ սպասարկեցին մեր թուչող մոդելների համամիութենական յերկրորդ մրցությունները։ Փոստի ճշտապահ և հստակ աշխատանքը շատ բանում ոգնեց մրցությունների շտաբին։ Զի կարելի չնշել բոլոր աշխատողների բացառիկ քաղաքավարի վերաբերմունքը։ Կրկին անդամ չնորհակալություն, ընկերներ։

Լինում են դեպքեր, յերբ գալիս են նամակներ վոչ լրիվ հասցեներով։ Հեշտ չե գտնել այդպիսի նամակի հասցեյատիրութը։ Սակայն կոկտեբելի կապավորների մոտ կանոն է մտցված՝ յուրաքանչյուր նամակը պետք է հանձննի հասցեյատիրոջը ինչ գնով ել վոր մինի։

Մի անգամ այսպիսի դեպք է պատահել։ Նամակը յեկել է չեռավոր Արևելքից։ Նամակը հասցեյագրված է. «Դրիմ, Սև ծովից 15 կիլոմետրի վրա կուրորտ, Յե. Շվարցին»։ Փոստատարը նամակը հետ բերեց—վոչ մի սանատորիայում այդպիսի հանգստացող չգտնվեց։ Այն ժամանակ վորոնումներին ձեռնարկեց ինքը փոստի պետը՝ կապի վարպետ ընկ։ Բուրգունենկոն։

Նա անցավ բոլոր սանատորիաները։ Սանատորիաներից մեկում նա լսեց, թե ինչպես մեկը կանչեց։

— Բնկեր Շվարց։

Բուրգունենկոն մոտեցավ Շվարց կոչված կնոջը։ Յուրյո տվեց նրան նամակը։ Նա ճանաչեց ամուսնու ձեռագիրը։ Յերկրաբան Շվարցը հուզված չնորհակալություն հայտնեց փոստի աշխատողին։ «Այս նամակը,—ասաց նա, —ուղարկել ե ամուսինը։ Յերբ յես մեկում եյի Դրիմ, նա գտնվում եր բեեռային ձմեռանցում։ Յես չեյի սպասում, վոր նա շուտ կվերադառնա և դրա համար ել չթողի իմ հասցեն։ Դժվար ե հայտնել իմ ուրախությունը, յերբ յես ստացա այս նամակը։ Այսպիսի հասցեյով նամակը, իհարկե, կարող եր ինձ չհասնել։»

Կոկտեբելի կապի բաժանմունքի փոստատարները սովորել են գտնել հասցեներ նույնիսկ այն դեպքում, յեթե ծրարի վրա գրված ե միայն վայրի անունը, անուն և հայրանունը։ Մոտ ժամանակներս ստացված եր մի նամակ այսպիսի հասցեյով։ «Ֆեռուսիա»։ Կոկտեբել։ Իվան Նիկոլայինին»։ Փոստատարն անցավ բոլոր հանգստան տների և սանատորիաների հաշվառման բաժինները, բայց վոչ մի տեղ չդատավ հասցեյատիրոջը։ Զհայտաբերեց նա հասցեյատիրոջը նաև գյուղիստրհուրդներում։ Այն ժա-

մանակ նա սկսեց հարցումիորմ անել տեղական բնակչություն, թե արդյոք նրանք չե՞ն մանաշում այդպիսի իվան Նիկոլայեվիցին։ Յեվ իվան Նիկոլայեվիցը դանվեց։ Բնորոշ ե, վոր փնտուելով հասցեյատիրոջը, փոստատարն առանց վնաս պատճառելու իր գործին, կատարում եր հիմնական աշխատանքը։

Լինում ե և այնպես, վոր հանգստացողներն արդեն տանից են գրում, չնորհակալություն հայտնում բացառիկ սիրալիր սպասարկության համար։

Ահա այդպիսի նամակներից մեկը։

«Կոկտեբելից անսպասելիորեն մեկնելով, յես հնարավորություն չունեցա անցնելու ձեզ մոտ, փոստ, վորպեսպի չնորհակալություն հայտնելի ձեր կոլեկտիվի գերազանց աշխատանքի համար։ Պետք ե ասեմ, վոր զա միայն իմ կարծիքը չե, —դա բոլոր այն հանգստացողների կարծիքն ե, վորոնք յերբեմից յեղել են կոկտեբելում։ Զեր փոստի բաժանմունքի աշխատանքի վոճը հիացնում է կազյոնչինայի, անգութ լակոնականության բացակայությամբ, վորոնք զեր բնորոշ են փոստային վորոշ հիմնարկությունների համար։ Զեր կոլեկտիվը կարողանում է զուգակցել գործնական խոսակցությունը զգայուն վերաբերմունքի հետ դեպի հաճախորդը։ Զեր աշխատակիցների կողմից յես յերեք չեմ լսել սուր պատասխան կամ կոպիտ նկատողություն։ Զեր կոլեկտիվը հասել ե այն բանին, վոր ձեր բաժանմունքը կարելի յե անփանել որինակելի»։

Այդ նամակը հասցեյագրված է բաժանմունքի պետին։

Կոկտեբելի կապավորներն իրենց աշխատանքով հասան այն բանին, վոր աշխատավորները փոստից գոհ են, նրանք ըստ արժանույն գնահատում են կապավորների աշխատանքի բոլշեկույան վոճը և մեթոդը։

Կոկտեբելի փոստը չի գտնվում ինչ-կոր առանձին պայմաններում, —դա կապի սովորական ձեռնարկություն է, վորն անցյալում առանձնապես լավ աշխատող չի յեղել, բայց չնորհիվ կոլեկտիվի կամքի, նրա կազմակերպվածության, կարգապահության, չնորհիվ հաղթելու անշեղ ցանկության կոկտեբելի բաժանմունքի կապավորներն առաջնություն են շահել և նվաճել համամիութենական փոխանցիկ կարմիր դրոշը։

Նրանց որինակին կարող են և պետք ե հետեւն կապի դյուդական բաժանմունքների բոլոր աշխատացողները։ Կապի յուրաքանչյուր բաժանմունք հանգավորություն ունի իր աշխատան-

քում՝ հասնելու որինակելի ցուցանիշների, —ամբողջ բանը մարդու կեն, ցանկությունն ու հաստատակամությունը՝ բոլչեիկորեն կազմակերպելու աշխատանքները, նախաձեռնություն հայտարերելը և դժվարությունները հաղթահարելլ:

Բաժանմունքների, գործակալությունների պետերը, փոստարները, կապի բոլոր աշխատաղները պետք ե որ որի վրա ձգտեն աշխատանքի ավելի բարձր ցուցանիշների, նոր նվաճումներով հարստացնելով Ստալինյան Յերրորդ Հնդամյակի անունով ծալալված համամիութենական սոցիալիստական մրցությունը:

ԱՇԽԱՏԵԼ ԿՈՒԼՏՈՒՐԱՊԵՍ

Կապավորները կուլտուրայի հաղորդիչներն են: Նրանք մասսաներին լրացրել, ժուռնալներ են հասցնում: Կոլտնտեսային գյուղում նրանք արմատացնում են ռազիոն, հեռախոսը: Այդ նշանակում ե, վոր կապավորներն իրենք ևս պետք ե կուլտուրական մարդիկ լինեն, լրագրեր կարումն, բարձրացնեն իրենց քաղաքական մակարդակը, ընդարձակեն իրենց հանրակրթական գիտելիքները:


Լենինի—Ստալինի կուսակցության չուրջը համախմբված, սոցիալիստական մեծ հայրենիքը ջերմորեն սիրող կոլտնտեսային գյուղացիության քաղաքական ակտիվությունն անչափ աճել է: Յուրաքանչյուր գյուղական կապավոր կարող ե բազմաթիվ որինակներ թերել, վորոնք բնորոշում են այդ ակտիվության աճումը: Յերբ հրապարակվեց Ստալինյան Սահմանադրության նախադիմը և սկսվեց ընտրությունների նախապատրաստումը, գյուղական շատ վայրերում կոլտնտեսականները միքանի կիլոմետր հեռավորությունից վոտքով գալիս ելին փոստային բաժանմունքը, վոր ավելի շուտ ստանան լրացրերը և ծանոթանան Ստալինյան Սահմանադրության նախադիմն ու «ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրությունների կանոնադրությանը»:

Հայտնի յե, թե ինչպիսի հսկայական հետաքրքրություն են հայտաբերում կոլտնտեսականները և կոլտնտեսուհիները գեղի ամբողջ խորհրդային յերկրի կյանքը և մեր յերկրից դուրս կատարվող գեղքերը: Ամբողջ կոլտնտեսային գյուղացիությունը լրարված ուշաբռությամբ և բարձր վերելքով եր հետևում կարմիր բանակի սիրագործություններին, վորը կառավարության հրամանով փայլուն կերպով կատարեց իր պատմական ազատագրական խնդիրը Արևմտյան Ռէկուֆյան Բել-

ոռւսիայում։ Հայրենասիրական մեծ զդացմունքներ համակեցին ամբողջ ժողովրդին Արևմտյան Ռւկրաինայի և Արևեմտյան Բելոռուսակայի մեր արյունակից յեղայըներին պահական լծից ազատագրելու կապակցությամբ։

Ամբողջ խորհրդային ժողովուրդն անդուլ ուշադրությամբ հետևում եր այն բանին, թե ինչպես եր մեր հզոր Կարմիր բանակը կործանէն հարված տալիս պատերազմի սպիտակ-Փիննական պրովոկատորներին։

Յեկամագիստ յերբ ստացվում են այնպիսի լրադրեր, վորոնց մեջ կարեւոր հազորդագություններ, վորոշումներ ու հոդվածներ են տպագրված, կոլտնտեսականները հաճախ դիմում են կապավորներին իրենց հետաքրքրող զանազան հարցերով։



Կապի կուլտուրական ձեռնարկության ներքին տեսք

Կապավորը կուլտուրական ուժ է գյուղում։ Կարո՞ղ ե արդյոք կուլտուրականների հարգանքին արժանանալ այն կապավորը, վորը չի կարողանա պատասխանել նրանց հարցերին։ Կարո՞ղ

է արդյոք այդպիսի կապավորը զրույց ունենալ կոլտնտեսականների հետ, խելացի կերպով պատմել լրագրի, ժուռնալի բովանդակության մասին։

Իհարկե, վոչ։ Ահա, այս պատճառով յուրաքանչյուր կապավոր պետք է ուշադրությամբ հետեւ լրագրերին, կարդաքափական գրականություն։

Արագ ե բարձրանում կոլտնտեսային մասսաների կուլտուրական մակարդակը։ Աճում են կուլտուրական պահանջները։

Մարդիկ հետաքրքրվում են ամեն ինչով. և այն հարցով, թե ինչպիս ե կառուցված յերկրագունդը, և թե նրանով, թե վորակեղ ե գտնվում այս կամ այն յերկիրը, և նրանով, թե ինչպիսի բանաստեղծություններ ե գրել ոռւս մեծ բանաստեղծ։ Ա. Պուչկինը և այլն։ Այստեղ ել կոլտնտեսականին ոգնության պետք ե զա կապավորը։ Հետևապիս, նա ինքն ել պետք և լինի միանգամայն գրագետ մարդ։

Կապավորը պետք է սովորի և սովորի, վորպեսզի կարողանա արդարացնել կուլտուրա ա:արածողի բարձր կոչումը, վորպեսզի քարշ չգա պոչից, մասսաներից հետ չմնա։ Սովորելն անհրաժեշտ ե նրա ամբողջ աշխատանքի համար։

Ինչո՞ւ, որինակ, տեսակավորողներն այնքան շատ թերություններ են ունենում և սխալ հասցեյով ուղարկումներ։ Այստեղ բանը միայն անհոգությունը չե։ Տեսակավորողներից շատերը նույնիսկ չդիտեն հայրենիքի աշխարհագրությունը։ Հայտնի յեն դեպքեր, յերբ Սիմֆերոպոլի (Ղրիմի ԱԽՍՀ մայլաքաղաքը) հասցեյագրված նամակը տեսակավորողներն ուղարկել են կովկաս։ Ալեքսանդրով (Իվանովոյի մարզ) հասցեյագրված նամակն ընկել է Ալեքսանդրովսկ—Սախալինում և այլն։

Յերբեմն կապավորներն ավելի կամ պակաս են գանձում քաղաքացիներից փոստային առաքումների վճարը։ Յեկամագանքին անում են վոչ թե չարամտորեն, այլ այն պատճառով, վոր չգիտեն կապի սպասարկման սակագներն ու տարիքները, կամ ճիշտ չեն հաշվում։ Մի այլ կապավոր կիսագրագիտության հետևանքով չի կարողանում ճշտորեն ու պարզ ճևակերպել բաժանորդագրության փաստաթուղթը, և բաժանորդը մնում է առանց լրացրի։

Կամ վերցնենք ելեկտրոկապը։ Հաճախ կապավորը լարերի, վրա տեսնում է պարանի, յերկաթալարի կտոր, մոտիկ բանող ծառի ճյուղ և այլն։ Յեթե այդ կապավորը չի ուսումնասիրել

Հեռախոսային կապի հիմունքները, ապա նա չի կարող իմանալ, վոր լարերի վրա պարանի, յերկաթալարի և այլ իրերի գցվածքները կարող են առաջ բերել լարերի միացում, զծի վնասվածք: Իսկ յեթե կապավորը գիտէ, թէ ինչից են առաջանում վնասվածքները, ապա նա հանդիսատ որաով չի անցնի գցվածքների կողքով և միջոցներ ձեռք կառնի գրանք վերացնելու համար:

Այն կապավորը, վորը չպիտե ուագիտեինիկայի հիմունքները, վոչնչով չի կարողանա ոգնել կոլտնտեսականին, յեթե լարային ռադիոհաղորդումը (արանսլային) հանկարծ ընդհատի: Իսկ պատճառը կարող է շատ հասարակ լինել: լարային զծի վնասվածքը կարող է հետեանք լինել լարի կտրվելուն և այլն:

Կարո՞ղ է արդյոք կոլտնտեսականի վստահությանն ու հարգանքին արծանանալ այն գործակալությունը կամ բաժանմունքը, վորտեղ կեղառա և, ծխակալած, անկարգություն և տիրում, վորտեղ չկա սեղան, թանաք, գրիչ, ծծան թուղթ և այլն: Կարո՞ղ է արդյոք կապի գրասենյակի կամ բաժանմունքի այն պետք, վորի մոտ փոստում միշտ հերթեր են լինում և վորի աշխատակիցները կոպիտ են վարվում հաճախորդների հետ, հույս ունենալ, վոր հեղինակություն կունենան բնակչության մոտ:

Կապավորները պետք է աշխատեն կուլտուրապես. գնահատեն իրենց և ուրիշի ժամանակը, վորպեսզի կարողանան լրացրերը ժամանակին հանձնել ընթերցողներին և փոստում հերթեր չստեղծեն: Հարկավոր է կանոնավոր և մաքուր կատարել փոստային առաքումները, միանդամայն կարգին պահել հեռախոսային բոլոր սարքերը, վնասվածքներից պաշտպանել կոմուտատորն ու հեռախոսային գիծը: Կապի գրասենյակի բաժանմունքի, գործակալության ամբողջ արտաքին տեսքը, նրա յուրաքանչյուր անկյունը պետք է կուլտուրական լինի, վորպեսզի փոստ մըտնելը գուրեկան լինի, վորպեսզի այնաեղ ամեն ինչ լինի հաճախորդների սպասարկման համար:

ՀՐԱՄԱՆԱՏԱՐՆԵՐԻ ԴԵՐԸ ԿԱՊԻ ՎՈՐԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՊԱՅՔԱՐՈՒՄ

Կապի իսկական հրամանատարն իր առանձնատենյակում յերկար նստած չի մնում: Նա գնում է բաժանմունքները, գործակալությունները, ըրջում է նստակատարների տեղամասերը և տեղում կազմակերպում ու ոպերատիվ կերպով ղեկավարում ե. աշխատանքը: Նա ամենասերտ կապ է պահպանում հասարակայնության, բնակչության հետ, զրուցներ և ունենում կոլտնտեսականների հետ, ուշադրությամբ լսելով բոլոր բողոքներն ու առաջարկությունները, ձգտում է, վոր կապի սեկցիան աշխատի յեռանդուն կերպով:

Բոլցելիկյան աշխատանքը մասսայի հետ հիմնական աշխատանք է հանդիսանում կապի յուրաքանչյուր հրամանատարի համար:

«Կապը մասսաների հետ, —սովորեցնում է մեզ՝ ընկեր Ստալինը, —այդ կապի ամրապնդումը, մասսաների ձայնին ունկնդրելու պատրաստակամությունը, —ահա թե ինչի մեջ ե բոլցելիկյան ղեկավարության ուժն ու անպարտելիությունը»:

Այնաեղ, վորտեղ կա ղեկավարների սերտ շիռում մասսաների հետ, վորտեղ աշխատավորների առաջարկությունները կենսագործում են, այնաեղ կապի գործը նույնական հաջող է գնում:

Կապի գրասենյակի, բաժանմունքի, գործակալության այն ղեկավարին միայն կարելի յէ անվանել որինակելի կապի բոլցելիկյան կազմակերպիչ, վորը հաշվի յէ առնում աշխատավորների ամեն տեսակի քննադրատական ցուցում ու այդ քննադրտության հիման վրա բարելավում ե աշխատանքը:

Կապի գրասենյակի, բաժանմունքի, գործակալության յավագետն իր աշխատակիցներին սովորեցնում է, թե ինչպես պետք է տարածել մամուլը, սովորեցնում և այդ աշխատանքը կատարելու—որը—որին, և վոչ թե միայն ամսվա վերջին։ Նա արտադրության մեջ ստեղծում է պայմաններ, վորոնք ոգնում են կապավորներին հաջող աշխատելու, գիտե իր աշխատողների կենցաղային պայմանները և հոգում են նրանց մասին։ Իսկական հրամանատարը կարպավորներին ներդրավում է քաղաքական, տեխնիկական, հանրակրթական ուսուցման մեջ և գիտե, վոր ինչքան բարձր է կապավորների քաղաքական ու կուլտուրական մակարդարմանը և այնքան լավ է նրանց աշխատանքի վորակը, այնքան հաղողությամբ են նրանք սպասարկում քաղաքացիներին։

Այսպիսի հրամանատարը իսկապես գլխավորում է սոցմըրցումը և ոգնումը մրցողներին։

Վորագես կանոն, վատ և աշխատում կապն այստեղ, վորտեղ հրամանատարները միայն խոսում են սոցմըրցման զարգացման ոգտին, իսկ գործնականում վոչնչով չեն ոգնում իրենց աշխատողներին։

ՅՈՒՐԱԲԱՆՉՅՈՒՐԻ ԿԱՊԱՎՈՐ ԿԱՐՈՂ Ե ՍԱՄԱՆՈՎԱԿԱՆ ԴԱՌՆԱԼ

Սոցիալիստական հայրենիքին նվիրված յուրաքանչյուր կապավոր պետք և աշխատի ուշադիր, կուլտուրական կերպով սպասարկի քաղաքացիներին, լրիվ կատարի նորմաները։

Կապավորների շաբաթերում քիչ չեն հարվածայիններ։ Դրանք այն մարդիկն են, վորոնք վոչ միայն լավորակ և կուլտուրական կերպով են աշխատում, այլև գերակատարում են նորմաները։ Սակայն իր գործը կատարելազործելու և ամենաբարձր վորակի հասցնելու համար (իսկ վորակը գլխավորն է) պետք է ամբարձել տեխնիկային ինչպես հարկն և և կարողանալ քամել նրանից այն առավելագույնը, ինչ նա կարող է տալ։

Յեկաման հարվածային կապավորները, վորոնք լիովին տիրապետել են տեխնիկային, սովորել են «հաշվել իրենց աշխատանքի բովեներն ու վայրկյանները, ոիթմ մտցնել, պահպանել մարդուտը, կարգ սահմանել աշխատանքի բոլոր պրոցեսներում...» (Մոլոտով) և նախաձեռնություն ցուցաբերելով հանում են կապի կատարելազործման, —այդ հարվածայինները դարձել են կապի իսկական ստախանովականներ։

Կապավորների մեջ զետ շատ շփոթություն կա այն հարցի առթիվ, թե ով և հանդիսանում ստախանովական։ Կապի հրամանատարներից և աշխատողներից վոմանք չէիտեն, թե վերջապես ում պետք է համարել ստախանովական։

Ստախանովականի սպարիչ, սրարդ և ճշգրիտ քննորոշումը տվել և ընկեր Ստալինը Ստախանովակամների համամիութենական առաջին խորհրդակցությանը—1935 թ. նոյեմբեր ամսախ։

«Աբդարե, գիտեցեք ընկեր ստախանովականներին։ Ի՞նչ

մարդիկ են նրանք։ Նրանք գլխավորապես յերիտասարդ և միջին տարիքի բանվորներ ու բանվորուհիներ են, կուլտուրապես ու տեխնիկապես կոփված մարդիկ, վորոնք տալիս են ճշգրտության, աշխատանքային ճշտապահության որինակներ, վորոնք զիտեն դնահատել ժամանակի գործոնն աշխատանքում և սովորել են հաշվել ժամանակը վոչ միայն ըսպեներով, այլև վայրկյաններով։ Նրանց մեծ մասն անցել է այսպես կոչված տեխնիկական մինիմումը և շարունակում է լրացնել տեխնիկական կրթությունը։ Նրանք ազատ են միքանի ինժեներների, տեխնիկների ու տնտեսավարների պահպանողականությունից և ճահճացումից, նրանք խիզախորեն առաջ են գնում՝ խորտակելով տեխնիկական հնացած նորմաները, ստեղծելով նորերը, ավելի բարձրերը, նրանք ուղղումներ են մտցնում մեր արդյունաբերության ղեկավարների նախագծային կարողությունների և տնտեսական պլանների մեջ։ Նրանք շարունակ լրացնում և ուղղում են ինժեներներին ու տեխնիկներին, նրանք հաճախ սովորեցնում և առաջ են մղում նրանց, վորովհետեւ նրանք այնպիսի մարդիկ են, վորոնք կատարելապես տիրապետել են իրենց գործի տեխնիկային ու գիտեն տեխնիկայից քամել այն առավելագույնը, ինչ կարելի յե քամել նրանից։


Յելելով այդ բնորոշումից, «Պրավդան» գրում եր.

«Նախաձեռնությունը, գիտակից, ավնիվ վերաբերմունքը դեպի աշխատանքը, ձգտումը՝ կատարելագործելու նրան այնպես, վոր նա աշխատանքային նվազագույն ծախսումների գիմաց տա քանակական ու վորակական առավելույն արդյունքներ, —ահա թե ինչ են ստախանովյան մեթոդները յուրաքանչյուր զբաղմունքի նկատմամբ։»

Այդ ամբողջովին կիրառելի յե ստախանովական կապավորների նկատմամբ։

Վերցնենք մի գյուղական նամակատար, վորը լրագրերն ու նամակները հանձնում է ժամանակին, լրագրերի ու ժուռնալների շատ բաժանորդներ ունի և լավ է աշխատում։ Այդ նամակատարը սիրում է իր գործը և ցանկանում է վորքան կարելի յե շատ ոգուտ տալ կոլտնտեսականներին։ Նա գտնում է, վոր կարող է ավելի լավ և շատ աշխատել, քան պահանջվում է նրանից ըստ նորմայի։ Այդ նամակատարը վճռում է սպասարկել վոչ միայն

իր, այլև Հարեան կոլտնտեսությանը։ Այդ նպատակով նա պայմանավորվում է մարշրուտի փոփոխման մասին։ Իվերջո պահպահնելով կոնտրոլ ժամկետները և ձգտելով նրանց կրծատմանը, նա սպասարկում է վոչ թե մեկ, այլ յերկու կոլտնտեսություն։ Նա կոլտնտեսականների ու կոլտնտեսուհիների բաժանորդագրություն կատարելով չի հանդսատանում։ ամեն որ նա զրոյց է ունենում այն կոլտնտեսականների և կոլտնտեսուհիների հետ, վորոնք լրագրեր կամ ժուռնալներ գեռ չեն դուրս գրում։ Պատմում է նրանց, թե ինչպիսի լրագրեր ու ժուռնալներ են հրատարակվում, ցույց է տալիս նրանց այս հրատարակությունները և ամեն որ բաժանորդագրություն է կատարում։ Իրեն ողնութ



Լրագրի բարձրակայն ընթերցում

Համար նա ներդրավիլ է հին ընթերցողներին։ Բայց այդ ել դեռևս բոլորը չեն։ Նամակատարը տեսնում է, վոր իր գյուղի համար մի փոստարկով քիչ է, նա աշխատում է, վոր գործակալությունը (իսկ յեթե հարկավոր է, նաև կատի բաժանմունքը կամ գրասենյակը) զնի կատի ևս մեկ արկղ։ Այս նամակատարի առաջարկությամբ արդ փնջում փոստի յերթեկությունը վերակառուցվեց, և կոլտնտեսականներն սկսեցին լրագրեր ստանալ վոչ թե յերեկոյան, այլ առավոտյան։ Յերբ այդ նամակատարը գնում

Ե նամակները ցրելու, հետն ունենում է նամականիշներ, ծրաբ-ներ, բացիկներ, թուղթ և նույնիսկ սոսինձ ու այդ բոլորն առա-ջարկում է կոլտնտեսականներին, վորպեսզի ստիպված չլինեն 3—4 կիլոմետր ճանապարհ անցնելու գործակալություն գնալու համար:

Իսկ յերեկոներն այդ նույն նամակատարը շարունակում է բարձրացնել իր գիտելիքները, ուսումնասիրում է կապի տեխնի-կան, լրագրեր և ժուռնալներ և կարգում: Յուրաքանչյուր կու-տնտեսականի նա կարող է տալ խելացի խորհուրդներ, տեղե-կություններ և նրան հետաքրքրող հարցերի պատասխանը: Այդ մարդը նախաձեռնություն և ցուցաբերում իր տեղամասի աշխատանքներում, մտցնում է ինչ-վոր մի նոր բան, գիտակցո-րեն ու ազնվորեն և վերաբերվում գործին. նա գործադրում է այնքան ժամանակ, վորքան ուրիշ նամակատարներ, սակայն սպասարկում է ավելի թվով կոլտնտեսականների և այն ել ավե-լի արագ ու ավելի լավ: Ահա այդպիսի նամակատարի մասին կարելի յե ասել, վոր նա ստախանովական ե: Այսպես պետք է աշխատի ամեն մեկը: «Ստախանովականները բացառություն չեն, ստախանովական կարող է դառնալ յուրաքանչյուր բան-վոր» (Մոլոտով):

Վերջին ժամանակներս սոցիալիստական կատի ձեռնարկու-թյուններում սկսեցին գարգանալ ստախանովական շարժման նոր ձևեր՝ բազմազդյահային սպասարկում, պրոֆեսիաների համա-տեղություն, վորոնք թույլ են տալիս իմաստ կերպով բարձրաց-նել աշխատանքի արտադրողականությունը և խտացնել աշխա-տանքային որը:

Իսոսովվ-Դոնի հեռագրչուհի վերպերեսկայան, ուցիոնա-լացնելով իր աշխատանքը, սկսեց մեկ հերթափահության շրջա-նում հաղորդել 30—35 հաղար խոսք:

Այժմ արդեն չկա վոչ մի հեռագրատուն, վորտեղ չլինեն բնկ. Վերդերեսկայային հետեղոներ:

Բողիստների հետեւ աշխատանքի բարձր արտադրողակա-նության և գերազանց վորակի համար, սոցիալիստական մրցու-թյան մեջ մտան և մորգիստ-հեռագրիչները, ուագիոհեռագրի աշ-խատողները, հեռախոսավարուհիները, մոնտյունները, փոստա-տարները, գանձապահները և վերահսկիչները:

Ամոլենսկի փոստային գրասենյակի վերահսկիչ ծածկագրող ընկ. Յեմելյանովան իր վրա պարտականություն վերցրեց հա-

մատեղելու իր աշխատանքը դրամատարների հաշիվները վարող և վճարված փոխադրումները մշակող աշխատակցի աշխատանք-ների հետ: Այսպիսով ընկ. Յեմելյանովան լրիվ չափով բեռնա-վորեց իր աշխատանքային որը:

Ստախանովուհի գանձապահ ընկ. Յակունչենկոն, վոր աշ-խատում է նույն փոստի գրասենյակում, խտացնելով իր աշխա-տանքային որը, վոչ միայն ընդունում և փոխադրություններ, այլև վաճառում է նամականիշներ, բլանկներ և հակողություն և վարում № 7-ա ձեփ գրքով: Նա հաջողությամբ է տանում լրա-ցուցիչ աշխատանքը և բացի այդ՝ զգալիորեն լավացրել է այդ:

Կապի մարմիններում աճեցին հաղարավոր ստախանովական-ներ: Նրանցից շատերին կապի վարպետի պատվավոր կոչում է տրված: Կապի վարպետները—դրանք ստախանովական աշխա-տանքի մարդիկ են, ըրանք կապի տեխնիկային կատարելապես տիրապետած մարդիկ են՝ կայուն, յեռանդուն և նախաձեռնող մարդիկ:

Կապավորների մեջ քիչ ընկերներ չկան, վորոնք իրենց աշ-խատանքում ցուցաբերել են իսկական աշխատանքային հերոսու-թյան որինակներ:

Բոլորը դիտեն հերոսության այն հրաշալի որինակի մասին, վորը ցույց է տվել Նելանի (Նիմնի Ամուրի մարզի Պոլինա Ռոսկենկոյի անվան շրջան) հակիչ կայանի մոնտյոր Նիկոլայ Դանիլովիչ Մաքսիմովը: Ընկեր Մաքսիմովը ուղեկցում եր Կեր-բինսկի շրջգործկոմի արշավախումբը խիզախ ողաջուհիներին վորոնելիս: Նա առաջինը հասալ ճամբար: Խորհրդային կառա-վարությունը բարձր գնահատեց ընկ. Մաքսիմովի անձնութա-ցությունը և նրան պարզեցարեց Աշխատանքային կարմիր գրո-չի շքանշանով:

Փոստատար Լիպատկինը (Ռյազանի մարզ, Սպասոկ) գար-նանային անձանապարհության ժամանակ, յերբ սառուցը շարժ-վում եր և քաղաքը կտրված եր, հաշվի չառնելով վոչ մի խո-չընդուռ, վճռեց ապահովել ազգաբնակությանը ժուռնալներով, լրագրերով և գրագրությամբ: Այսպես պատահեց, վոր գետի մեջտեղում սառուցը կոտրվեց և ընկեր Լիպատկինն ընկալ ջու-րը: Կապավորն արտասովոր ջանքեր ե զործ զնում, փոստն ազա-տում է ու հասցնում ըստ պատկանելույն կատարելապես ան-վնաս:

Կիևի մարզի Մակարովսկի շրջանի Զալալովկա գյուղում

Հինգ տարի յեւ, ինչ աշխատում եւ կոլտնտեսային փոստատար Լաբեզին: Նրա հոչակը վորպես հիանալի աշխատղի հայտնի յեւ այդ ըրջանի սահմաններից դուրս: Այստեղ 110 ծխերը բաժանորդագրված են ավելի քան 250 որինակ լրագրի և ժուռնալների: Գյուղում չկա վոչ մի ընտանիք, վորը լրագրի և ժուռնալ չստանա: Այստեղ ազգաբնակությանը նամակները հասնում են առանց ամենաչնչին խակ ուշագման. յերեկոները ընկ. Լաբեզին հավաքում եւ կոլտնտեսականներին և նրանց համար լրագրեր եւ կարդում:

Արիության և իսկական հերոսության քիչ որինակներ չցուցաբերեցին խորհրդային կապալորները, վորոնք աշխատում եյին Արևմտյան Ռւկրախնայում և Արևմտյան Բելոռուսիայի ըրջաններում կապը վերականգնելու գործում: Լեհական սպաները, թողնելով քաղաքները և գյուղերը, քանդում եյին գծերը: Անտառներում թագնված սպաները, վարդապետները դիմերսիոն ակտեր եյին կատարում, ամեն կերպ փորձում եյին խորուսկել կապի միջոցները: Որինակ, անսպասելի կերպով կտրվեց հեռագրահեռախոսային կապը Ռուսոյի և Կորեցի միջև: Ավարիայի տեղը հայտարեկելը դժվար եր: Նովոգրադ-Վոլին կապի գրասենյակի տեխնիկ ընկ. Մելնիկը մելնեց գիծը: Անտառում հրացանաձգություն եր: Կարմիր Բանակը հետապնդում եր սպայական բանդաներին: Ծնկ. Մելնիկը հայտարերեց կտրվածքի տեղը և վերացրեց ավարիան:

Գնդացրային կրակի տակ վերականգնվեց կապը Լուցկ—Բուչաչ—Զերտկով և ուրիշ վայրերի միջև: Գիշեր-ցերեկ ստախանովաբար աշխատում եյին գծի վրա մոնայորներն ու տեխնիկները:

«Միմիայն նպատակի պարզությունը, հաստատակամությունը նպատակին հասնելու գործում ու բնավորության կայունությունը, վորոնք ջախջախում են բոլոր և ամեն տեսակի խոչնդուները, կարողացան ապահովել այդպիսի պանծալի հաղթանակը»—գրել ե ընկեր Ստալինը Աշխարադ—Մոսկվա անորինակ ձիավագք կատարած թուրքմենստանի հեծվորներին ուղղված իր վողջույնի մեջ:

Ահա այդ հաստատակամությունը, բնավորության այդ կայունությունը պետք ե զարդացնի իր մեջ յուրաքանչյուր կապա-

գոր, ձգտելով կապի որինակելի աշխատանքին, վորը պահանջում են մեր կուսակցությունը, կառավարությունը, ամբողջ յերկիրը:

ՍՈՎՈՐԵԼ՝ ՈՐԻՆԱԿԵԼԻ ԱՇԽԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ի՞նչ եւ հարկալոր, վորպեսզի կարելի լինի աշխատել հըստակ, առանց սիալների և թերությունների:

Նախ եւ առաջ հարկավոր եւ բավ իմանալ իր գործը: Մենք արդեն պատմեցինք, թե ինչու յուրաքանչյուր կապալոր պարտավոր եւ լինել կատարելապես գրագետ մարդ:

Բայց լավ կարդալը, գրել կարողանալը, թվարանությունը, աշխարհագրություն իմանալը դեռ բավական չե: Անհրաժեշտ է տիրապետել կապի տեխնիկային: Ի՞նչ եւ նշանակում այդ: Յեթե խոսքը գյուղական նամակատարի մասին ե, ապա նա պետք է գիտենա, թե ինչպես ե կազմակերպված փոստային կապը: Զե՞ վոր նրա աշխատանքից ե կարպված գործակալության աշխատանքը, վորն իր հերթին կապված ե բաժանմունքի կամ գրասենյակի հետ: Փոստը գործակալությունից, յենթագրենք, ուղարկվում ե ցերեկվա ժամը 2-ին, իսկ նամակատարը, փոստարկը դատարկելով, նամակները բերում ե գործակալություն միայն յերեկոյան ժամը 5-ին: Նշանակում է այդ նամակները կուղարկվեն մի որ ուշացումով: Փոստային կապը բարդ մեխանիզմ ե, վորի մեջ չկան քիչ կարեւություն ունեցող ու յերկրորդական պոտուտակներ: Վորպեսզի ամբողջ մեխանիզմը ժամացույցի պես պարզություն աշխատի, հարկավոր ե, վոր յուրաքանչյուր պտուտակ առանձին-առանձին ե բոլոր պտուտակները միասին ճշտորեն գործեն: Լարգրերի ու ժուռնալների բաժանորդագրությունն ընդունելու ժամանակ կապավորները պետք ե կարողանան ճշտ ճեւակերպել բաժանորդագրության փաստաթղթերը: Նրանք պետք ե իմանան փոստային առաքումների ընդունելության ու հանձնման կանոնները, նրանց ուղարկման սակագները, պետք ե գի-

տենան, թե ինչպես պետք ե ճշտորեն կազմակերպել փոստի յԵրթիեկությունը և այլն: Կապի աշխատողները մամուլի հիմնական տարածողներն են: Նրանք պետք ե կարողանան կազմակերպել մամուլի տարածումը մասսայական բացատրական աշխատանքի միջոցով, ոգնության կանչելով հասարակական տարածողներին, առաջին հերթին հին ընթերցողներից: Դրա համար անհրաժեշտ է, վոր կապի աշխատողներն իմանան, թե ինչպիսի լրագրեր ու ժուռնալներ են հրատարակվում մեզ մոտ, վորպեսզի յուրաքանչյուր կոլտնտեսականի առաջարկի հենց այն հրատարակությունը, վոր հետաքրքրում է նրան: Յեկ հասկանալի յե՝ մամուլ տարածողը պարտավոր է ամեն տեսակի տեղեկություններ գիտենալու, վոչ մի կերպ չի կարող աշխատել:

Ավելի լայն ու խոյն են արմատավարվում կոլտնտեսային դյուզում հեռախոսն ու ռազիոն: Այստեղից պարզ ե, վոր գյուղական կապավորը, առանց լարային ելեկտրակապի ու ռազիոյի հիմունքները գիտենալու, վոչ մի կերպ չի կարող աշխատել:

Հեռակա ուսուցման նպատակն ել հենց այն ե, վոր գյուղական կապավորներին տրվեն անհրաժեշտ գիտելիքներ և բարձրանարաններ: Նրանց արտադրական վորակը:

Հեռակա ուսուցման ընորհիվ հեռակայող կապավորներից շատերն սկսեցին ավելի լավ աշխատել: Ուսուցման միջոցով նամակատարները, գործակալները, բաժանմունքների պետքը և ելեկտրակապի աշխատողները պետք ե տիրապետեն այն գիտելիքներին, վորոնք անհրաժեշտ են նրանց որինակելի աշխատանքի համար: Այս կամ այն հեռակայողի հաջողությունները վորոշվում են վոչ միայն այն պատասխաններով, վոր նա տալիս ե կոնսուլտացիայի ժամանակ, վոչ միայն այն ստուգիչ աշխատանքներով, վոր նա ներկայացնում է կապի գրասենյակին, այլ գլխավորապես ուսուցման գործնական արդյունքներով—նրա աշխատանքով:

Ի՞նչ եւ նշանակում այս: Փոստային կապի վերաբերյալ դասախոսության մեջ կարող ե լինել խիստ կարեռ մի հատկած՝ փոստի տրակտներով յերթեկության կոնտրոլ ժամկեաների մշակման մասին: Բաժանմունքի հեռակայող պետը գերազանցութեն կկատարի այդ հատվածին վերաբերող գրավոր աշխատանքը, կպատասխանի կոնսուլտանտի բոլոր հարցերին: Բայց պարզվում է, վոր տրակտի վրա, վորտեղ գտնվում է այդ հեռա-



Խվանովոյի մարզի Ալեքսանդրովի շրջանի գերազանցուհի հեռակայողները թիվ 1.
Մ. Ն. Խապիլյան (Կարաբանովի կապի բաժանմունք) և ընկ. Ա. Կ. Կրիլովան (Ստրութինսկի իապի բաժանմունք) դասախոսությունը սովորելիս:

Կայողի բաժանմունքը, փոստի յերթևեկության կոնարու ժամկետները, նրա հանցանքով, վիճում են ամեն քայլափոխում։ Փոստի փոխանակման պահին նրա մոտ ծանրոցներն ու նամակները դեռ չեն կապված պարկերում, բեռնագրերը դեռ պատրաստ չեն, փոստի ուղարկման և ստացման մասին նա ուզեց դրերում նշումներ չի անում և այլն։

Կարելի յե՞ բաժանմունքի այդպիսի պետին անվանել հեռակա կա ու ուսուցման գերազանցիկ, թեկուղ և նաև գերազանցորեն պատասխանի բոլոր հարցերին։

Վո՞չ մի դեպքում։ Նախ և առաջ հարկավոր է որինակելի աշխատանք հիմնված իր գործի տեխնիկան դիտենալու վրա։

Բավական չե, որինակ, վոր կապավորը մենակ ինքը յուրացնի, թե ինչպես պետք է ճիշտ գրել հասցեն։ Հարկավոր է այդ սովորեցնել նաև իր գյուղի բնակիչներին։ Չե՞ վոր պատահում

ե այնպես, վոր հեռակայողն ինքը գիտէ, թե ինչպես ե հարկավոր հասցեյագրել նամակները, բայց նրա գործակալությունից ստացվում ե սխալ և վոչ ճշգրիտ հասցեներով գրագրություն։

Ուսուցումը պետք է զուգորդել գործնականի հետ։ Ասենք հեռակայողը դասախոսություն ստացալ փոստային կապի մասին, կարդաց մեկ յերկու անգամ այդ գրքույկը, կատարեց կոնտրու աշխատանքը կապի գրասենյակում, հաջողությամբ պատասխանեց կոնսուլտանտի հարցերին։ Բայց դա քիչ է, նա պարտավոր է տեղն ու տեղն ուղղել իր աշխատանքի սխալները, չհանդսուանալ, մինչեւ, վոր չկատարի այն բոլորը, ինչի մասին ասված և դասախոսության մեջ։ Միայն այն ժամանակ կարելի յեւ ասել, վոր այդ հեռակայողը հաջողություն ունի վոչ թե միայն ուսուցման, այլև, վոր գլխավորն ե՝ աշխատանքի մեջ։

Հեռակայող գերազանցիկներից շատերը՝ նախկին կոլտնտեսային նամակատարներ ու փոստ փոխադրողներ, գործակալներ, ձեռք բերելով գործնական լավ արդյունքներ, առաջ են քայլափառ աշխատանքի կապի մարմիններում և լավ են կատարում այդ աշխատանքը։ Ամեն մի մարզում, յերկրամասում կարելի յեւ թվել վոչ թե մեկ, այլ շատ հեռակայողների, վորոնք նշանակված են կապի բաժանմունքների և նույնիսկ գրասենյակների պետեր։

Բարձրորակ աշխատելու համար կապավորները պետք է տիրապետին իրենց գործի տեխնիկային։

Ժողովրդական անտեսության, քաղաքացիների կուլտուր-կենցաղային կարիքների որինակելի սպասարկման խնդիրները, մեր հայրենիքի պաշտպանության շահերը պահանջում են, վոր յուրաքանչյուր կապավոր անգուլ բարձրացնի իր քաղաքական գրագիտությունը, վորպեսզի նա լինի վոչ թե նեղ աշխատող, այլ ժողովրդի բարորության համար քաղաքական ակտիվ մարտնչող, բոլցեկլյան ազիտատոր և պրոպագանիստ։

Վնասարարները խարում եյին մեր աշխատողներին, քաղաքականուրեն ոգտագործելով նրանց կույր վատահությունը զեպի դիմակալորված թշնամիները։ «Ահա թե ինչու, —ասում եր ընկեր Ստալինը, —տեխնիկային տիրապետելու մասին հին լողունքն այժմ անհրաժեշտ է լրացնել բուլեկիզմին տիրապետելու, կաղըրերին քաղաքականապես դաստիարակելու և մեր քաղաքական անհսկության լիկվիդացիայի մասին նոր լոգունդով»։

Բոլցեկլյան ափրապետելը սրում ե քաղաքական հոտառու-


թյունը, բարձրացնում ե աչալը ջությունը և հեղափոխական գդունությունը, մեր կալբերի մեջ զաստիարակում և բոլշևիկյան անհաջողություն գետի թշնամին:

Բոլշևիզմին տիրապետելու մասին ընկեր Ստալինի կոչը մեր յերկրի աշխատավոր լայն մասսաների մեջ կենդանի արձագանդ գտավ:

Ծնկեր Ստալինի նախաձեռնությամբ և նրա անմիջական ղեկավարությամբ ստեղծվեց «ՀամԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթացը», վորը հանդիսանում է ամենակարևոր միջոցը բոլշևիզմին տիրապետելու համար:

Կապավորների առաջ դրված և մի մարտական խնդիր՝ հենց մոտակա ժամանակներում կապը դարձնել սոցիալիստական տընտեսության առաջավոր ճյուղը:

Արա համար անհրաժեշտ ե վճռականորեն վերջ տալ կանցկացնելու այլական, անպատճառ պատմությանը, դիմագրկությանը, անսուշադրությանը դեպի մարդիկ: Համառությունն ու յենը, տեխնիկային տիրապետելու գործում և քաղուսուցման ուղղը տեխնիկային ոգտագործելու կապի բոլոր միջոցները քաղաքականիկն իրոք կուլտուրակես, իրոք հստակ կերպով սպառագինների համար:



Շարժական փոստային գործակալություն

ՍՏՈՒԴԻԶ ՀԱՐՑԵՐ ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

(Հարցերին պատասխանեցեք բանավոր և ձեր պատասխաններն ստուգեցեք դասախոսությամբ)

1. Ինչպիսի՞ պատճառներ են պայմանակորել կապի միջոցների ծագումը և զարգացումը նախապատմական եպօխյում, քարե դարում, Փեոլալիզմի, կապիտալիզմի ու իմպերիալիզմի եպոխյում:

2. Թվեցեք տեսողական և հնչյունային կապի այնպիսի միջոցներ, վորոնք գործադրվում ենին հին ժամանակներում արտակարգ հաղորդումների համար:

3. Ինչո՞ւ մինչև հեղափոխությունը Ռուսաստանի փոստ-Հեռագրական ցանցն ընդգրկում եր միմիայն քաղաքները:

4. Ինչպե՞ս եր վարձատրվում փոստ-Հեռագրական ծառայողների աշխատանքը ցարական Ռուսաստանում:

5. Ինչպի՞ս փոխվեց կապը խորհրդային իշխանության տարիների լնթացքում:

6. Ի՞նչ գեր է խաղում կապը մեր յերկրի կրանքում:

7. Ինչպի՞ս պետք է հասկանալ «ուշադրությունը գետի մարդը առաջին տեղում» միաբը:

8. Ի՞նչ պայմաններ պետք ե կատարի յուրաքանչյուր կապավոր՝ կուլտուրական աշխատաղ լինելու համար:

9. Ինչո՞ւ յի մարդկանց հետ կատարվող բոլշևիկյան աշխատանքը հանդիսանում կապի յուրաքանչյուր հրամանատարի աշխատանքի հիմքը:

10. Իերեք քաղաքացիների նկատմամբ կապավորների հոգատար վերաբերմունքի որինակներ:

11. Վո՞ր կապավորի մասին կարելի յէ ասել, վոր նա աշխատում ե ստախանուլաբար:

Կարդացեք այս դասախոսությունը ձեր տչխառնագիր ընկերների հետ միասին։ Քննարկեցեք նրանց հետ յուրաքանչյուր թեման տպանձին, հետո կազմեցեք պլան, վորի մեջ դպրոց և ճշգրիտ կերպով ցույց տվեք, թե այս դասախոսության հիման-վրա ի՞նչչիմիս միջոցներ եք վճռել կիրառել կյանքում, վորպեսզի աշխատեք բարձրորակ և կուլտուրապես։

Այդ պլանը հանձնեք կոնսուլտանտին:

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼ, ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

Դասախոսությունը կազմված է այն հաշվով, վոր ուսումնասիրի 25 ամսատանքային որում :

Պարապեցեք որական $1-1\frac{1}{2}$ ժամ, հակառակ դեպքում նըշված ժամկետին դուք չեք կարողանա ուսումնասիրել դասախոսություններ կամ կարգադր հապեճապ ու մակերեսուրեն:

Վորպեսզի կարողանաք ավելի լավ յուրացնել դասախոսությունը, կարդացեք բարձրածայն, առանց շտափելու։ Մի գլուխ կարդալուց հետո մտածեցեք կարդացածի մասին և տեսրակի մէջ գրեցեք այն, ինչ դուք համարում եք ամենագլխավորը և ինչ հառկավոր ե ավելի լավ պահել հիշողության մէջ։

Ամբողջ դասախոսությունը կարդալուց հետո փորձեցեք պատասխանել կոնտրոլ հարցերին և կատարեցեք դասախոսության մեջ նշված առաջարանքը :

Յեթե կոնտրոլ հարցերին չեք կարողանում պատասխանել,
դասախոսության համապատասխան տեղերը կարդացեք նորից,
աչքի անոռեր տեսրակի մեջ ձեր գրածները:

Շատ լավ կլինի, յեթե դասախոսությունը սովորելուն մաս-
նակից դարձնեք դասընթացներին չհեռակայող ձեր աշխատանքի
ընկերներին։ Դասախոսությունը կարդացեք բարձրաձայն և ան-
միջամտեա քննարկեցեք կարդացածը։



Տեղակի մեջ գրեցեք այն բոլոր հարցերը, վրոնք առաջանում են ձեր մեջ դասախոսությունը սովորելիս։ Այդ հարցերը լուսաբանելու համար զիմեցեք կապի գրասենյակի կոնսուլտանտին։

Գրեցեք մեզ՝ հասկանալի յե գրված արդյոք դասախոսությունը և դասախոսության ինչպիսի խորհուրդները գուք ոզտառործեղիք ձեր աշխատանքքը բարելավելու համար։

Գյուղական կամավորութիւն հետակա գառընթացների հասցեն
է՝ Յերեան, Կապի լուսաթուածաւ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԻՆՉԳԵՍ	ԵՆ ԱՌԱՋԱՅԵԼ ՅԵՎ ԶԱՐԴԱՅԵԼ ԿԱՊԻ ՄԻԶՈՅԵԲՐԸ . . .	3
Կապի ծաղումը:	Տրոնսպրտի և զրի սկիզբը: Տևողական և հնչունային կազ: Կազն աղալիների ողնությամբ: Փռոսի սկիզբը:	14
ՓՈՍՏԸ	Ֆեռնալիջայի ԴԱՐԱՃՐՁԱԿՆՈՒՄ	14
Վանական և բաղտՔային փոստը: Կապի միջոցները ուռաւական իշխանություններում: Թաթարական յամ փոստակայան: Ցամական վաղը (մինչեւ պետական փոստի սկիզբը): Պետական փոստի սկիզբը: Գետական փոստը Ռուսաստանում: Սևմաֆորային հեռոգրություն:	14	
ԿԱՊԻ	ԿԱՊԻՑԱԼԻՋԱՅԻ ԴԱՐԱՃՐՁԱԿՆՈՒՄ	24
	Ելեկտրական հեռակիր: Հեռախոս: Բագիր:	
ԿԱՊԻ	ՎՐԱՅԿԸ ՈԲԻՄԱՍՏԱՆՈՒՄ ՄԻՒԶԵՎ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԱՅՃՄ	
ԿԱՊԻ	ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՈՅԻԱԼԻՍԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԵԶ . . .	36
ՍՏԵՂԾԵՆՔ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՈՐԺԱՆԵՐ ԿԱՊ		47
ՎՈՐԱԿԸ ԳԼԽԱՎՈՐՆ Ե ԿԱՊԻ ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ		54
ԱԲԱՋԻՆ ԵՑՂՈՒՄ—ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ՄԱՐԴԸ		59
ԱՇԽԱՏԵԼ ԿՈՒԼՏՈՒՐՈՎՆԵՍ		65
ՀՐԱՄԱՆԱԳԱՐՆԵՐԻ ԴԵՐԸ ԿԱՊԻ ՎՈՐԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՊԱՅՔԱՐՈՒՄ . . .		73
ՅՈՒՐԱԲԱՆՉԱՐՆԵՐԻ ԿԱՊԻ ՎՈՐԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՊԱՅՔԱՐՈՒՄ . . .		77
ՅՈՒՐԱԲԱՆՉԱՐՆԵՐԻ ԿԱՊԱՎՈՐ ԿԱՐՈՅ Ե ՍԱՏԱԿԱՆՈՎԱԿԱՆ ԴԱՐՆԱԼ . . .		79
ՍՈՎՈՐԵԼ ՈՐԻՆԱԿԵԼԻ ԱՇԽԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ		86
ԱՏՈՒԳԵԶ ՀԱՐՑԵՐ		91
ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ		92
ԻՆՉԳԵՍ ՊԵՏՔ Ե ՈՒՍՈՒՄՆԱՌՆԵՐԵԼ ԴԱՄԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ		92



Խարազիք Ա. Հակոբյան
Թարգմ և Մելքյան

Տեխ. խմբագիր Գ. Զենյան
Սրբագրիչ Ա. Մանուկյան
Կոնսորտ սրբագրիչ Լ. Արովյան

Գլավիտի լիազոր Ե. 1135 Պատվիր, № 192, ակրած 550

Հանձնվել և տրամադրության 11.VI.1910 թ.

Առորագ վաճ և տպագրելու 26.IX.1940 թ.


Քաղաքական գրականության պետական հրատարակչության
պատուակն Յեղիան, Ալիանցիքյան № 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0305070

24.152



НАРОДНЫЙ КОМИССАРИАТ СВЯЗИ СССР

ОРГАНИЗАЦИЯ
И ЭКСПЛОАТАЦИЯ
ПОЧТОВОЙ СВЯЗИ

Лекция 1-я

Типография Гос. изд. полит. литературы, Ереван, Аллабердян № 65